2023, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (636)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԽՈՍՔ ԾՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

Վեհափա՛ռ Տեր, որդիական խոնարհությամբ ի սրտե շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը ծննդյան օրվա կապակցությամբ: Թող ամենակարող Աստված Իր Աջի զորությամբ անսասան պահի եւ պահպանի Հայաստանյայց առաքելահաստատ Եկեղեցին, ապավեն լինի Ձեզ՝ Հայոց Հորը՝ շարունակելու քահանայապետության լուսածիր ընթացքը:

Ցանկանում ենք, որ վերջին տարիներին մեր բազմաչարչար ազգին պատուհասած արհավիրքները, անդառնալի եւ անմոռանալի կորուստները, պղտորաջուր եւ կործանարար ալեկոծությունները չխորտակեն Ձեր լավատեսության լուսեղեն խարիսխը, չխեղեն ապագայի Ձեր տիրավանդ տեսիլքը:

Դուք ճանաչել եք ճշմարիտ Լույսը, ընթացել Տիրոջ շավիղներով, եւ Ձեր կեսդարյա հոգեւոր սպասավորությունը դրա վկայությունն է: Իմաստուն չեն դառնում, իմաստությանն արժանանում են. իմաստություն, որի սկիզբը Տիրոջ երկյուղն է (Առակ. Ա 7): Լիահույս ենք, որ Ձեր իմաստությամբ դեռ երկար տարիներ հովվապետելու եք Հայաստանյայց Եկեղեցին՝ զործելով ի սեր եւ ի նպաստ մեր պատմական հայրենիքի՝ Հայաստանի եւ Արցախի, մեր ծվատված եւ աշխարհասփյուռ ազգի, այսուհետ եւս մեծահոգաբար ներելու եք Ձեր մոլորյալ զավակներին, որոնք արհամարհում են իմաստությունն ու խրատը (Առակ. Ա 7). Մեծերն են միայն ներում:

Աղոթում ենք երկնային Հորը, որ Ձերդ Սրբությանը քաջառողջություն եւ կենաց արեւշատություն պարգեւի, վստահ ենք՝ Աստծու զորակցությամբ Ձեր հայրապետության հաջորդ տարիները եւս նշանավորվելու են եկեղեցաշինությամբ ու հայրենանվեր նորանոր ձեռնարկներով:

«Քրիստոնյա Հայաստան»
երկշաբաթաթերթի խմբագրություն

Կյանք՝ ընծայված ազգին ու հայրենիքին

Կյանքի վերապրումը՝ որպես ինքնարարում, ի վերուստ ոչ բոլորին է տրված: Գոյությունն ու արարումը կյանքի մի կարճ հատվածում պահանջում են կապ եւ հարաբերություններ ամբողջի հետ: Նա, ով ընտրում է իր կյանքի ուղին, այդ ուղու մեջ է գտնում կյանքի իմաստն ու բանալին՝ որպես երկնքի հետ երկխոսություն:

Կյանքը երկրի վրա մեզ տրված է այն ըմբռնելու տարբեր սկզբունքներով:

Անհատի կարեւոր հատկանիշներից է նրա սկզբունքայնությունը, որն անքակտելիորեն ընկած է կյանքի բազմաթիվ օրինաչափությունների հիմքում:

Մեկին տրված են կյանքի սրբազան կարողություններ, որոնք նրան տանում են վերարարման, արդյունքում ստեղծում վերջինիս պատկերն անսահմանության եւ հավերժի մեջ՝ որպես ժամանակի միահյուսում: Մարդասիրությունը, պարտքի զգացումը, պատասխանատվությունն իր ընտրած ուղու առջեւ, աստվածային խորհրդատվությունը, իմաստությունն ու վստահությունը ոչ բոլորին են տրված: Ասված է. «Ամեն մեկին՝ իր չափով»:

Հայ հոգեւոր առաջնորդներից շատերին էին շնորհված աստվածատուր առաքինությունները, աստվածային խորհրդատվությունը, իմաստությունն ու վստահությունը, ընտրված յուրահատուկ ճանապարհը դեպի անմահություն: Խորհելը, մտահոգվելը, զգոնությունը, ողջախոհությունը, իր ազգին ու հայրենիքին անսահման եւ անշահախնդիր նվիրումը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հիմնական հատկանիշներն են: Անցած քսանչորս տարում նա շատ բան նախաձեռնեց, իրագործեց, փոփոխեց, վերածնեց. գուցե երբեք չմտածեց, թե ապագան ինչ անուն կտա իր ճշմարիտ միջոցներով կյանքի կոչված աշխարհաշեն ծրագրերին:

Ապագայի անաչառ դատաստանի, երախտապարտության սկզբունքով՝ նախնիների փառավոր անունների եւ նրանց կատարած գործերի առջեւ երբեք չասաց՝ «Հաղթեցի քեզ, Սողոմոն»:

Նախնիների կառուցած շինությունների, եկեղեցիների, վանական համալիրների նորոգումներն ու վերականգնումները, փոփոխությունները՝ իր կողմից այժմ իրագործված, դիտարկեց որպես ամբողջականության պահպանման միջոցներ, որպես վերածնության նոր խորհրդանիշներ նախնիների փառքի առջեւ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի ջերմեռանդությունն ու հայրական հոգածությունն իր հոգեւոր հոտի հանդեպ, նրա՝ ազգային ինքնության եւ պետականության պահպանմանն ուղղված գործունեությունն ու ջանքերը կազմում են մեկ ներդաշնակ ամբողջություն: Ժամանակի ծանր բեռը վերցնելով՝ Վեհափառ Հայրապետը շարունակում է իր տիրավանդ եւ ազգանվեր առաքելությունը, նվիրյալ հայորդիներին խրախուսում, մղում հոգեւոր-մշակութային արժեքները պահպանելուն եւ վերականգնելուն, ճարտարապետական անհրաժեշտ շինություններ ու կոթողներ կառուցելուն: Նրան հասու է ճանաչելը ժամանակի եւ տարածության միասնությունը, որը մեկ պարզ բառով կոչում ենք «հավերժություն»:

Մերի ԴԱՆԻԵԼՅԱՆ
ճարտարապետ

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, սկսվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովն ընդլայնված կազմով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, ապա Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով:

Ժողովի ընթացքում կքննարկվեն Հայաստանում եւ Արցախում ստեղծված կացության, սրբալույս մյուռոնի օրհնության, եպիսկոպոսական ձեռնադրության եւ Մայր տաճարի վերանորոգման ընթացքին առնչվող հարցեր:

Քննարկման առարկա կդառնան նաեւ եկեղեցա-վարչական եւ եկեղեցու առաքելության արդյունավորմանը վերաբերող այլ հարցեր:

Հընթացս ժողովի՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը, տեղեկանալով Բերձորի միջանցքում հայ երիտասարդների առեւանգման մասին, խստորեն դատապարտեց ադրբեջանական իշխանությունների կազմակերպած հերթական բռնությունն ու սադրիչ գործողությունը, ինչը շարունակվող թշնամական դրսեւորումն է Ադրբեջանի հակահայկական քաղաքականության:

Ձիթայուղի օրհնության կարգ՝ սրբալույս մյուռոնի օրհնությանն ընդառաջ

Օգոստոսի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածի Սուրբ Վարդան եւ Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Ձիթայուղի օրհնության կարգ: Երեկոյան ժամերգությունից հետո ձիթայուղով լի արծաթե կաթսան դրվեց մատուռ-մկրտարանի խորանին՝ փակվելով շղարշե ծածկոցով: Այսուհետեւ ամեն օր՝ մինչեւ Մյուռոնօրհնեքը, երեկոյան ժամերգությունից հետո կկատարվի հոգեւոր պաշտոն՝ շարականներով, աղոթքներով եւ սուրբգրային ընթերցվածքներով:

Անհրաժեշտ նյութերը ձեռք բերելուց հետո՝ Մյուռոնօրհնությունից քառասուն օր առաջ, սկսվում է պատրաստության շրջանը՝ Ձիթայուղի օրհնության արարողությամբ:

Սրբալույս մյուռոնի օրհնությունն այս տարի տեղի կունենա հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում. Ամենայն

Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու նվիրական սրբություններով կօրհնի սուրբ մյուռոնը, որն այնուհետեւ կբաշխվի Հայ Եկեղեցու բոլոր թեմերին:

Հանդիպում նորաօծ քահանաների հետ

Օգոստոսի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սույն թվականի հուլիսի 16-ին քահանայական կոչմանն արժանացած եւ Մայր Աթոռում քառասնօրյա պատրաստության շրջանն ավարտած նորաօծ քահանաներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի եւ «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանի:

Վահան սրբազանը, Վեհափառ Հայրապետին ներկայացնելով իր իսկ ձեռամբ քահանայական օծման արժանացած նորընծաներին՝ Տ. Պետրոս քհն. Կադեյանին, Տ. Մովսես քհն. Սահակյանին եւ Տ. Հակոբոս քհն. Իսահակյանին, ուրախությամբ ընդգծեց, որ վերջիններս պատրաստ են իրենց նվիրյալ ծառայությունը բերելու Հայոց Եկեղեցու անդաստանում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց քահանա հայրերին հովվական ծառայության կոչվելու առիթով՝ նրանց փոխանցելով իր հայրական պատգամը:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ նորաօծ քահանաներն իրենց հոգեւոր սպասավորությունն սկսում են հայ ժողովրդի համար բարդ ժամանակաշրջանում, երբ առավել կարեւորվում է հայ եկեղեցականի ամբողջական ու նվիրյալ ծառայությունը՝ հավատ, հույս ներշնչելու հայորդիներին այս դժվարին փորձությունների միջով անցնելիս, զորացնելու նրանց սերն առ Աստված:

Վեհափառ Հայրապետը հոգեւորականներին պատգամեց բարի օրինակ լինել հավատացյալների համար, նվիրյալ եւ հանձնառու սպասավորությամբ ուրախություն ու մխիթարություն պարգեւել հավատավոր ժողովրդին, սեփական կարողությունները լավագույնս ի սպաս դնել հոգեւոր ծառայության մեջ՝ բարձր պահելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարի համբավը:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց քահանա հայրերին՝ նրանց ընծայելով «Մաշտոց» ծիսարաններ, ձեռաց խաչեր եւ Սուրբ Հաղորդության մասնատուփեր:

Առաջիկա օրերին քահանա հայրերը Նորին Սրբության օրհնությամբ ծառայության կկոչվեն Հայոց Եկեղեցու տարբեր կառույցներում եւ թեմերում:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Նարեկավանք

Վանա լճի հարավային ափին տեղակայված Նարեկ գյուղում էր գտնվում «Նարեկայ վանքը», որը հիմնադրել են Ժ դարում Բյուզանդիայում հալածված, Հայաստան վերադարձած եւ Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունյաց գավառում ապաստանած հայազգի վանականները: Համաձայն Ստեփանոս Տարոնեցու վկայության՝ Նարեկավանքն ունեցել է իր վանական հստակ կանոնադրությունը, ինչպիսին որ ունեին նաեւ Հռոմոսի եւ Կամրջաձոր վանքերը: Սա խոսում է այն մասին, որ վանքում հաստատվել էր որոշակի կարգուկանոն, որին պարտավորվում էին ենթարկվել կրոնական կյանքուբարքով ապրել փորձող վանականները՝ պատշաճորեն մասնակցելով ծիսապաշտամունքային արարողություններին, համայնական կյանքով կենցաղավարելով, նաեւ իրենց առանձնական-հոգեւոր ապրումների մեջ խորասուզվելով:

Նարեկավանքի գլխավոր տաճարը սրբուհի Սանդուխտի անունը կրող եկեղեցին է: Այդ անունը կապվում է ավանդության հետ, ըստ որի՝ տաճարի հարավային խորանում է ամփոփված սրբուհի Սանդուխտ կույսի գերեզմանը: Ս. Սանդուխտ եկեղեցին ունի երեք խորան, արեւելյան կողմում՝ զույգ ավանդատներ, արեւմտյանում՝ կամարակապ խորշեր: Այս տաճարն արտաքուստ ուղղանկյունաձեւ կառույց է՝ կազմված ութանիստ թմբուկից եւ բրգաձեւ վեղար ունեցող գմբեթից: Արեւելյան կողմից Ս. Սանդուխտ

եկեղեցուն կից է Ս. Գրիգոր Նարեկացու գմբեթավոր մատուռ-դամբարանը, իսկ հարավային կողմում է գտնվում զույգ որմնամույթով ու պայտաձեւ Ավագ խորանով, գմբեթավոր դահլիճի հորինվածքով վեր խոյացող Ս. Աստվածածին եկեղեցին:

Նարեկավանքի համալիրը ծաղկում է ապրել մասնավորապես Անանիա Նարեկացու, իսկ հետագայում արդեն՝ Խոսրով Անձեւացու եւ վերջինիս որդու՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու վանահայրության ժամանակահատվածում: Միայն հարյուրամյակներ անց՝ 1707 թվականին, Մինաս վրդ. Ղափանցին հիմնովին վերանորոգում է Նարեկավանքը: 1787 թ. արդեն վանահայր Բարսեղ վարդապետը եկեղեցիներին կից՝ արեւմտյան կողմում, կառուցում է մի ուղղանկյուն, քառամույթ, ընդարձակ գավիթ, որտեղ էլ թաղված են Ս. Գրիգոր Նարեկացու եղբայր Հովհաննես վարդապետը եւ Անանիա Նարեկացին: 1812 թ. գավթի արեւմտյան մուտքի առջեւ կառուցվում է եռահարկ զանգակատուն, իսկ 1843-ին Նարեկավանքի գմբեթները նորոգվում են ճարտարապետ Սահրատ Մեմարբաշիի եւ նրա որդի Մովսեսի ձեռամբ:

1858 թ. Նարեկավանքը բարեկարգվում է Հովհաննես վարդապետի կողմից, իսկ ահա 1867-ին վանահայր Հովսեփ Ռաբունին Ս. Գրիգոր Նարեկացու մատուռ-դամբարանի վրա կանգնեցնում է մի մարմարե խաչքար, որը կրում է Սուրբ Աստվածածնի պատկերը՝ մանուկ Հիսուսը գրկին, իսկ նրանց առջեւ ծնրադիր կեցվածքով քանդակված է Ս. Գրիգոր Նարեկացին: 1884 թ. Արիստակես վարդապետը Նարեկավանքում վարժարան է բացում՝ կարծես թե հիմք դնելով վանական համալիրի ծաղկման մի նոր շրջանի, սակայն ընդամենը շուրջ մեկ տասնամյակ անց՝ 1896 թ., վանքի վրա են հարձակվում քրդերը, որոնք սպանում են վանահայր Եղիշեին ու եւս 12 միաբաններ: 1901 թ., սակայն, ի հեճուկս ժամանակի ազգային-կրոնական դժվարհաղթահարելի մարտահրավերների եւ ի մխիթարություն սեփական ծնողների քաղցրությունը վայելելու բերկրանքից զրկված տասնյակ մանուկների՝ Նարեկավանքում, Զանշյան ընտանիքի բարերարությամբ, սկսում է գործել մի որբանոց-վարժարան՝ հավատարիմ սույն վանական համալիրի՝ վաղուց ի վեր դավանած ուսումնակրթական վսեմ առաքելությունն իրագործելու բարի նպատակամիտվածությանը: ➥ էջ 4

Աշխարհի հնագույն հայկական գործող կրթական հաստատությունը

Հարցազրույց Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Տաճատ վրդ. Ծատուրյանի հետ

— Աստված օգնական, Հայր սուրբ: Գրեթե երկու տարի է, ինչ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ նշանակվել եք Հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ աշխարհի հնագույն հայկական գործող կրթական հաստատության՝ Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ: Խնդրում եմ համառոտ ներկայացնել կրթական այդ հաստատության հիմնադրման պատմությունը:

— Աստված պահապան: Այո՛, 2021 թ. հոկտեմբերի 1-ին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ եւ օրհնությամբ ստանձնեցի Հնդկահայոց հոգեւոր հովվի եւ Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարչի պարտավորեցնող ու պատասխանատու ծառայությունը: Ի գիտություն եւ առ ի տեղեկություն շատերի՝ պետք է բարձրաձայնեմ, որ ինչպես Դուք ճիշտ եւ տեղին նկատեցիք, Կալկաթայի 202-ամյա Հայոց մարդասիրական ճեմարանն աշխարհում գործող հայկական կրթօջախներից հնագույնն է՝ հիմնադրված 1821 թ. ապրիլի 2-ին:

Կալկաթայում ազգային դպրոց մտահղանալու պատիվը պատկանում է Աստվածատուր Մուրադխանյան անունով մի հայրենապաշտ, կրթասեր հայի: Վերջինս իր մահից առաջ, 1797 թ. հուլիսի 30-ի թվակիր կտակով, ի նպաստ Կալկաթայում հայկական ազգային դպրոցի կառուցման, 8000 հնդկական ռուփի է նվիրաբերում: Սակայն իր կտակից երկու տարի անց՝ 1799 թ. սեպտեմբերի 29-ին, բարերար Մուրադխանյանը, դժբախտաբար, վախճանվում է, եւ Կալկաթայում հայկական կրթօջախ հիմնելու գաղափարը կարծես թե անորոշության եւ մոռացության է մատնվում:

Մուրադխանյանի մահից 20 տարի անց՝ 1819 թ., մեկ այլ ազգասեր հայորդի՝ Մնացական Վարդանյան անունով, հիմք ընդունելով Աստվածատուր Մուրադխանյանի ավանդած կտակը, Կալկաթայի հայ երեւելիներից բաղկացած դպրոցաշինական հանձնախումբ է ստեղծում: Ի նպաստ ազգային ճեմարանի հիմնադրման՝ հանձնախումբն անմիջապես ձեռնամուխ է լինում հանգանակության: Ճեմարանի հիմնադրման համար անհրաժեշտ նյութական միջոցներն ապահովելուց հետո՝ 1821 թ. ապրիլի 2-ին, Կալկաթայի Հին Չայնաբազար փողոցի թիվ 353 հասցեում, որը բավականին մոտ էր 1708 թ. կառուցված Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցուն եւ 1734 թ. հայազգի վաճառական Մանվել Հազար Մալյանի բացած հայկական լաստանավահանգստին (Armenian Ghat), Մնացական Վարդանյանի եւ յուր հայրենակիցների նախանձախնդիր ջանքերի շնորհիվ ծնունդ է առնում Կալկաթայի հայկական մարդասիրական ճեմարանը:

Այսպիսով՝ Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանն ունենում է երկու հիմնադիր. մեկը՝ Աստվածատուր Մուրադխանյանը՝ հեռավոր Հնդկաստանում հայկական անդրանիկ կրթօջախ հիմնելու իր նախաձեռնությամբ եւ ի նպաստ դրա ժառանգած առաջին նվիրատվությամբ, իսկ մյուսը՝ Մնացական Վարդանյանը՝ Մուրադխանյանի տեսիլքը համառ եւ անխոնջ ջանքերի շնորհիվ կյանքի կոչելու եւ իրագործելու ազնիվ առաքելությամբ:

Հիմնադրվելուց 62 տարի անց՝ 1883 թ., ճեմարանը Հին Չայնաբազար փողոցից տեղափոխվում է Կալկաթայի ամենահայտնի եւ բարվոք թաղամասերից մեկի՝ Ֆրի Սքուլ (այսօր՝ Միրզա Ղալիբ) փողոցի նորակառույց շենքը, որտեղ էլ առ այսօր գտնվում եւ գործում է Հայոց մարդասիրական ճեմարանը:

«Առաջին ուսուցիչ մարդասիրական ճեմարանի ի հիմնադրութենէ», ինչպես ինքն է իրեն բնութագրում, եղել է Հովհաննես Հարություն Իսահակ Աղանուրյանցը, որը

1824 թ. ճեմարանի աշակերտների համար պատրաստել եւ հրատարակել է «Այբբենարան» կամ «Աղանուրեան կարգ ուսմանց» դասագիրքը:

Ճեմարանում դասավանդել են ժամանակի հայտնի ուսուցիչներ եւ կրթության անխոնջ նվիրյալներ, որպիսիք էին Մարտիրոս Մկրտչյան-Դավթյանցը, Հարություն Գալուցյանը:

Անվանի ուսուցիչների եւ տեսուչների հետ հարկ եւ տեղին է հիշել նրանց արժանի հետեւորդ սաներին՝ նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինին, որի մարմինն ամփոփված է Կալկաթայի Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցու բակում, մեծ վաճառական եւ բանասեր Թադեոս Ավետումյանին, պատմաբան Հարություն Օվանյանին, գրաբարագետ եւ թարգմանիչ Խաչիկ Թոմասյանին, հմուտ հայագետ եւ «հոգատար կալկաթահայութեան» Թոմաս Մելքումյանին, Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցու կանոնադրության հեղինակ, գրաբարագետ Հարություն Աբգարյանին, կալկաթահայության ամենահայտնի եւ կարկառուն դեմքերից ու մեծահոգի բարեգործներից Հովհաննես Գալստյան ասպետին, հայազգի բարերար Պետրոս Կրետին, որը 1931 թ. ճեմարանն օժտում է գեղեցիկ ու հարմարավետ լողավազանով (առ այսօր գործող), բոլորին քաջածանոթ, ազնիվ, նախանձախնդիր ու կրթասեր հայորդուն՝ Դավիթ Դավթյանին, որի նյութական միջոցներով 1922 թ. Կալկաթայում բացվում է Դավթյան օրիորդաց դպրոցը (այժմ՝ Դավթյան օրիորդաց վարժարան) եւ որպես քույր դպրոց՝ գտնվում է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի տեսչության հսկողության եւ խնամակալության ներքո, գրաբարագետ ու պատմաբան Մեսրոպ Սեթյանին, Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Կյուրեղ արք. Իսրայելյանին եւ այլոց:

— Շնորհակալություն հետաքրքիր եւ բովանդակալից ներկայացման համար. խնդրում եմ անդրադառնալ ճեմարանի ներկա վիճակին:

— Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հարուստ պատմության նոր փուլի սկիզբը դրվում է 1999 թ., երբ այն հանձնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինմանը. Ամենայն Հայոց Կաթողիկոսին է վերապահվում ճեմարանի գործունեությունն ամբողջությամբ տնօրինելու իրավունքը: Ճեմարանի կառավարչին եւ օգնական հոգեւորականներին նշանակում է Ամենայն Հայոց Հայրապետը:

Ներկայում Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը գործում է որպես երկսեռ, անգլիական թեքումով հայկական դպրոց: Դասավանդվող առարկաների թիվը շուրջ երկու տասնյակ է: Ուսուցման լեզուն հիմնականում անգլերենն է: Հայերենով դասավանդվում են «Հայոց լեզու եւ գրականություն», «Հայրենագիտություն», «Հայոց պատմություն», «Հայ Եկեղեցու պատմություն» եւ «Երաժշտություն» առարկաները:

Անձամբ մեզ համար մեծ պատիվ է լինել կառավարիչը հայկական հնագույն կրթական հաստատության, որի արմատներն Աստծու կամքով եւ հայ ազգի սերուցքի տեսիլքի, նախանձախնդրության եւ տքնաջան աշխատանքի շնորհիվ շատ խորն ու հաստատուն են՝ մշտապես ամուր եւ անսասան պահելու նրա կրթական բարձր մակարդակն ու բարի ավանդույթները:

— Իսկ կրթական ինչ ծրագրով է այժմ առաջնորդվում Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը:

— Հնդկաստանում պաշտոնապես գրանցված եւ պետականորեն ճանաչված հայկական դպրոցը Դելիի՝ հնդկական տասնամյա դպրոցական կրթության որակավորման խորհրդի անդամ է եւ աշակերտներին լավագույնս է պատրաստում 10-րդ դասարանի ավարտական քննություններին: Ճեմարանի կրթական ծրագիրն ու չափորոշիչները համապատասխանեցված են Դելիի կրթական համակարգին:

Ճեմարանի 10-րդ դասարանը «լավ» կամ «գերազանց» գնահատականներով ավարտելուց հետո հայ տղաներն ու աղջիկներն ուսումը 2 տարի շարունակում եւ ավարտում են Կալկաթայի Լա Մարտինիեր անգլիական ավագ դպրոցում: Երկու տարի՝ մինչեւ 12-րդ դասարանի ավարտը, վերոհիշյալ դպրոցում հայ աշակերտների ուսման, ճեմարանում կեցության, սննդի, հագուստի եւ բժշկության ծախսերն ամբողջապես հոգում է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը:

— Ովքե՞ր կարող են ընդունվել Հայոց մարդասիրական ճեմարան:

— Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարան կարող են դիմել 7—10-ը տարեկան հայ տղաներ եւ աղջիկներ՝ աշխարհի բոլոր երկրներից: Հայոց մարդասիրական ճեմարանում ուսումն անվճար է: Դպրոցը նաեւ հոգում է Հայաստանից եւ այլ երկրներից ճեմարան ընդունված՝ ազգությամբ հայ աշակերտների՝ Հնդկաստան ուղեւորության, կեցության, սննդի, հագուստի եւ բժշկության ծախսերը: Ծնողներն իրենց զավակների՝ Հայոց մարդասիրական ճեմարան ընդունելության համար պահանջվող փաստաթղթերն անձամբ ներկայացնում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոն: Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարան ընդունվելու համար դիմորդները գրավոր թեստ են հանձնում «Հայոց լեզու եւ գրականություն», «Հայրենագիտություն», «Մաթեմատիկա» եւ «Անգլերեն» առարկաներից, որից հետո տեղի է ունենում հարցազրույց ճեմարանի հոգեբանի հետ: Ընդունելության հետ կապված հավելյալ տեղեկությունների համար մեզ հաճախ են դիմում contact@armeniancollege.edu.in էլեկտրոնային հասցեով:

— Տասներկուամյա կրթություն ստանալուց հետո հայ աշակերտներն իրենց հետագա ուսումը բուհերում շարունակելու ինչ հնարավորություններ ունեն:

— Լա Մարտինիեր դպրոցի 11-րդ եւ 12-րդ դասարանները «լավ» կամ «գերազանց» գնահատականներով ավարտելուց հետո հայ պատանիներին ու պարմանուհիներին բացառիկ հնարավորություն է տրվում իրենց ցանկությամբ եւ ընտրությամբ, ինչպես նաեւ ճեմարանի տեսչության հետ համաձայնությամբ, Կալկաթայի որեւէ բարձրագույն ուսումնական հաստատություն դիմելու՝ հետագա ուսումն ինչպես բակալավրիատում, այնպես եւ մագիստրատուրայում շարունակելու համար: Ուսման ողջ ընթացքում հայ ուսանողներին տրվում է կրթաթոշակ: Դրանից բացի՝ նրանց ուսման, ճեմարանում կեցության, սննդի, հագուստի եւ բժշկության ծախսերն ամբողջությամբ հոգում է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը:

— Խնդրում եմ նաեւ անդրադառնալ աշակերտների կենցաղին եւ առօրյային:

— Ճեմարանում ուսումնական տարին սկսվում է ապրիլի սկզբներին եւ տեւում մինչեւ հաջորդ տարվա մարտի կեսը, իսկ ամառային արձակուրդը՝ մայիսի կեսից մինչեւ հունիսի վերջը: Հայաստանի ազգային-եկեղեցական եւ Հնդկաստանի պետական ու կրոնական տոներին ճեմարանում, հիմնականում, հայտարարված են ոչ աշխատանքային օրեր:

Դպրոցում գործում է հնգօրյա ուսումնական շաբաթվա կարգը՝ 8 դասաժամով:

Մեր աշակերտների առօրյան բավականին հարուստ ու հագեցած է: Ամեն առավոտ՝ նախաճաշից հետո, ճեմարանի դահլիճում տեսչի գլխավորությամբ եւ ուսուցիչների ու աշակերտների մասնակցությամբ տեղի է ունենում Ասամբլեան, որն սկսվում է Տերունական աղոթքով: Վերջինիս հաջորդում է Ս. Ներսես Շնորհալի հայրապետի «Իմաստութիւն Հօր Յիսուս» աղոթքը, որից հետո բոլորը միասին երգում են Հայաստանի ազգային օրհներգը: Այնուհետեւ երկուական աշակերտ հանդես են գալիս կարճ ուղերձներով՝ կապված բնության պահպանության եւ մաքրության, էլեկտրաէներգիայի եւ ջրի խնայողաբար գործածության, անձնական հիգիենայի, միմյանց հանդեպ հարգալից վերաբերմունքի, հայկական եւ հնդկական ազգային ու կրոնական տոների, պատմության հիշարժան դեպքերի ու դեմքերի եւ բազմաթիվ ու տարաբնույթ թեմաների առնչությամբ: ➥ էջ 4

Աշխարհի հնագույն հայկական գործող կրթական հաստատությունը

➥ էջ 3

Շաբաթվա բոլոր օրերին՝ դասերից հետո, աշակերտները մեկ ժամից ավելի զբաղված են լինում մարզական տարբեր խաղերով, ոմանք էլ նախընտրում են օգտվել մարզասրահից: Մեր աշակերտների ցանկալի մարզաձեւերն են ֆուտբոլը, ռեգբին, բասկետբոլը, վոլեյբոլը, սեղանի թենիսը, լողը, կրիկետը, բադմինտոնը: Ամենօրյա մարզախաղերից հետո աշակերտներն անցնում են սերտողության՝ տեսչության եւ հայ ուսուցիչների հսկողության ներքո լավագույնս եւ պատշաճորեն կատարելով հաջորդ օրվա համար նախատեսված տնային առաջադրանքները: Դասերից հետո եւ ազատ օրերին աշակերտների համար հաճախ կազմակերպվում են գրական, գեղարվեստական, ճանաչողական, մարզական, մշակութային միջոցառումներ ու մրցույթներ եւ այցեր Կալկաթայի եւ նրանից դուրս գտնվող տարբեր տեսարժան վայրեր, այդ թվում՝ աստղադիտարան, կենդանաբանական այգի, ջրաշխարհ, ժամանցային եւ գիտաճանաչողական վայրեր, թանգարաններ, ծովափ եւ այլն:

Ճեմարանի աշակերտները սիրով մասնակցում են Կալկաթայի Սուրբ Երրորդություն, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եւ Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցիներում մատուցվող Սուրբ Պատարագին, ինչպես նաեւ՝ Կալկաթայից դուրս գտնվող հայկական եկեղեցիներ տարեկան ուխտագնացություններին:

Տարվա ընթացքում գերազանց վարք եւ ուսման մեջ առաջադիմություն ցուցաբերած, մարզական ու մշակութային մրցույթներում եւ միջոցառումներում առաջին երեք տեղերն զբաղեցրած աշակերտները ճեմարանի տեսչության կողմից պարգեւատրվում են գովասանագրերով ու պատվոգրերով:

— Հայր սուրբ, ինչ սպասելիքներ ունեք ճեմարանավարտ սաներից:

— Իր հիմնադրման օրվանից ճեմարանի նպատակը եղել է Հնդկաստանում եւ հարեւան երկրներում բնակվող հայության մեջ մեր ազգի ստեղծագործ մտքի լուսավորության ջահը վառ պահելը: Ներկա պահին Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը որակյալ ուսում եւ գերազանց կրթություն ապահովող, հայ երեխայի նյութական, բարոյական, հոգեւոր եւ դաստիարակչական խնամքով լավագույնս զբաղվող, բարի ավանդույթներով առլեցուն հայկական կրթօջախ է: Մեր գերնպատակը ոչ միայն օտար երկրում հայի անդադար արարող մտքի լուսավորության ջահը պարզապես վառ պահելն է, այլ դրանից անդին՝ հայ պատանուց ուսյալ եւ գիտակից, քրիստոնեական հավատքով եւ արժեհամակարգով լի հայ մարդ կերտելը՝ ամբարած հարուստ գիտելիքներն ու փորձառությունը Հայաստանում եւ հանուն Հայաստանի ծառայեցնելու համար: Ահա սա է փափագն ու տեսիլքը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որի հայրական օրհնության, անմիջական ուշադրության, ծնողական խնամքի եւ ամենօրյա հոգածության ներքո է գտնվում Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը:

Թող Աստված մեր ազգային կյանքում բազմապատկի գերորակյալ հայկական դպրոցների թիվը, որտեղ հայ մանուկը կարողանա գիտությամբ եւ հավատքով, իմաստությամբ եւ Աստծու շնորհներով հարստացած՝ աճել ու զարգանալ: Հայկական կրթօջախներում հայ մանուկը միշտ պիտի բարձրանա եւ երբեք չպիտի նվաղի ու նվազի, իսկ եթե պիտի խոնարհվի, ապա միայն ցորենի հասկի պես ու նրա օրինակով՝ իր միջի ատոքը յուր ազգին ու Եկեղեցուն ծառայեցնելու եւ օգտակար լինելու պայմանով:

— Շնորհակալություն, Հայր սուրբ, հետաքրքիր եւ բովանդակալից հարցազրույցի համար:

Նարեկավանք

➥ էջ 2

Նարեկավանքն ուխտագնացության սրբազան օջախ է, եւ նարեկյան այդ ուխտի նվիրական օրերն են համարվում մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի պայծառակերպության (Վարդավառ) եւ Վարագա Սուրբ Խաչի տոները: Նարեկ գյուղի զարդն է նաեւ վանքի հյուսիսարեւմտյան կողմում՝ մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող այն սրբավայր-քարայրը, որտեղ ծգնել է Ս. Գրիգոր Նարեկացին:

Իսկ ի՞նչ առանձնահատկություններ ուներ Նարեկյան ուսումնակրթական կենտրոնը: Առհասարակ ողջ միջնադարում ուսումնական կենտրոնները կամ այլ կերպ ասած՝ վարդապետարանները, դարձել էին մատենագրական ու գիտական կյանքի հիմնասյունային հանգրվաններ: Այդպիսի մի հանգրվան էր նաեւ Նարեկավանքը, որտեղ Անանիա Նարեկացու ջանքերով Ժ դարի երկրորդ կեսին հիմնադրվում է ուսումնական կենտրոն: Նարեկավանքի վարդապետարանում են ուսանել ժամանակի ականավոր գործիչները, որոնցից վստահաբար կարելի է առանձնացնել Ուխտանես պատմիչին եւ հայոց տիեզերական վարդապետ Ս. Գրիգոր Նարեկացուն: Նախեւառաջ, սակայն, խոսենք Նարեկյան դպրոցի հիմնադրի՝ Անանիա Նարեկացու մասին. նա մանկավարժ էր, փիլիսոփա եւ աստվածաբան, ինչպես նաեւ եկեղեցական նշանավոր գործիչ: Լայն տարածում են գտել մասնավորապես Անանիա Նարեկացու խրատները, որոնցում հարուստ նյութ կա վանական կենցաղավարության, բարոյագիտության, խորհրդապաշտության (միստիկա) եւ դրա առանձնահատկությունների վերաբերյալ: Անանիա Նարեկացու խրատաշարում գլխավորը, սակայն, մարդու մաքրագործման եւ բաղձալի փրկության խորհուրդն է:

Նարեկավանքի հաջորդ նշանավոր ներկայացուցիչը Խոսրով Անձեւացին է, որի մատենագրական ժառանգության մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատությունը: Այս երկը ծառայել է որպես ուսումնական ձեռնարկ եւ իր հոգեւոր-կրթական նշանակությամբ մեծ ազդեցություն է թողել Նարեկյան դպրոցի ձեւավորման ու զարգացման ընթացքի վրա: Խոսրով Անձեւացին իր այդ աշխատությամբ ջանացել է հավատացյալների շրջանում սեր արթնացնել գրի ու գրականության նկատմամբ՝ մերժելով օտարամոլությունը եւ ընդգծելով հայոց լեզվի ու հայ գրի նշանակությունը:



Նարեկյան դպրոցի հաջորդ կարկառուն ներկայացուցիչը Ս. Գրիգոր Նարեկացին է՝ Անանիա Նարեկացու աշակերտը եւ Խոսրով Անձեւացու որդին: Անանիա Նարեկացին ստեղծագործել է մինչեւ Ժ դարի 90-ական թթ., իսկ Ս. Գրիգոր Նարեկացին՝ մինչեւ 1003 թ., փաստորեն՝ ուսուցիչն ու աշակերտը շուրջ մեկուկես տասնամյակ համատեղ հոգեւոր-կրթական, գիտական գործունեություն են վարել: Եվ բնավ պատահական չէ, որ Անանիա Նարեկացուն մահից հետո փոխարինել եւ վարդապետարանի ղեկավարումը ստանձնել է Ս. Գրիգոր Նարեկացին՝ հայոց մեծահանճար վարդապետը: Հայ եւ համաշխարհային գրականության մեջ Ս. Գրիգոր Նարեկացին հռչակվել է «Մատեան ողբերգութեան» կամ «Նարեկ» պոեմով, որը գեղարվեստական արժեքով, բովանդակայնությամբ, քնարերգական արվեստի անսահման հարստությամբ, բանաստեղծական բազմազան եւ գունագեղ արտահայտչամիջոցներով նշանակալի ազդեցություն է թողել ոչ միայն Նարեկյան դպրոցի կրթադաստիարակչական ու ստեղծագործական ավանդության ձեւավորման, այլեւ համայն հայ եւ նույնիսկ համաշխարհային գրականության վրա: Սուրբ վարդապետի շուրթերն են դրոշմել աստվածաղերս այս խոսքերը, որոնք ընթերցել եւ չազդվելն անհնարին է.

Ընդէ՞ր կարծրացուցանես զսիրտ եղկելոյս՝
Չերկնչել ի քէն, անճառ եւ ահաւոր:
Մի՛ եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս՝
Իբր ապաջան սերմանող անբերրի երկրի:
Մի՛ լիցի ինձ երկնել եւ ոչ ծնանել,
Ողբալ եւ ոչ արտասուել,
Խորհել եւ ոչ հառաչել,
Ամպել եւ ոչ անձրեւել,
Ընթանալ եւ ոչ հասանել,
Ինձ ձայնել եւ քեզ ոչ լսել,
Պաղատիլ եւ անտես մնալ,
Կողկողել եւ ոչ ողորմել,
Աղաչել եւ ոչ ինչ օգտել,
Զոհել եւ ոչ ճենճերել,
Զքեզ տեսանել եւ դատարկ ելանել:
Լո՛ւր ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ՝
միայնդ հզօր.
Մի՛ զանվճար տանջանացն տոյժս՝
Ընդ թուով աւուրց մեղօք կեցելոյս
Չարագործիս ինձ հատուցաներ...

Տիեզերական վարդապետի կոթողային ստեղծագործությունից ներշնչվել են ոչ միայն միջնադարի, այլ նաեւ նոր ժամանակների հայ քնարերգության եւ արվեստի նշանավոր ներկայացուցիչները:

Նարեկավանքը նաեւ բանասիրական ու մատենագրական հզոր կենտրոն է եղել: Այնտեղ գրվել են սուրբ պատարագի եւ ժամերգության մեկնություններ, կատարվել ընդօրինակություններ եւ թարգմանություններ, ծաղկվել բազմաթիվ ձեռագրեր: Նարեկավանքից մեզ հասած առաջին ձեռագիրը 1069 թ. գրված մի Ավետարան է:

Նարեկյան վարդապետարանի գիտակրթական համակարգը համապատասխանել է միջնադարյան բարձրագույն դպրոցների չափանիշներին, ինչի մասին է վկայում այն փաստը, որ Նարեկավանքում եւս դասավանդվում էին «յոթ ազատ արվեստները»:

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ



ՀԱՅԿ ՎԱՀԱՆՅԱՆ

* * *

Դարերի միգում՝ բիրտ ու մոլեգին,
Շատերն են փորձել ուժով ժանտ սրի
Եվ կամ խոսքերով՝ սուտ ու պատրածին,
Պոկել մեր սրտից Նշանը Տերունի:

Բայց ջինջ հավատի լույսով հար օծված՝
Սրտում անթեղած անունը Տիրոջ,
Առաջ ենք շարժվել՝ աչքներս միշտ հառած
Կենսաճառագայթ Խաչին մեր Տիրոջ:

Մենք չենք վախեցել հրից ու սրից,
Կտրել-անցել ենք մրրիկը մահի,
Ըմպել սարսափի լեղի գավաթից
Ու չենք տապալվել զարկից ոսոխի:

Բայց մեր օրերում՝ մութ ու արյունոտ,
Երբ ճախրում է ուրուն հուսալքումի,
Եվ անցյալը դժնի՝ թվում այնքան մոտ,
Կրկին ընկել ենք գիրկը թմբիրի:

Մոռացել ենք մենք հավատը նախնյաց,
Փակել ակունքը կենսատու ջրի,
Ծառայագրվել պատրանքին խամրած,
Ստրուկը դարձել անցավոր կրքի:

Բայց հուսալքումը մեզ չի տիրելու,
Ոչ էլ կրքերն են հար շղթայելու մեզ,
Կապանքները մեր հոդս են ցնդելու՝
Հարյալ Խաչյալի սիրուց մեղսակեզ:

Դեռ քայլելու ենք մթում դարերի՝
Հրի ու սրի, պատրանքի միջով,
Եթե չենք ուզում չքվել գրկում անէի,
Պիտի ընթանանք Քրիստոսի լույսով:

Աստվածաշունչը՝ դաստիարակության անկյունաքար

«Երիտասարդն ի՞նչ միջոցով ուղղի ճանապարհն իր, եթե ոչ Քո խոսքերը պահելով»

(Սաղմ. ՃԺԸ 9):

«Երեխաները կյանքի առաջին իսկ տարիներից պետք է վարժվեն զբաղվել բացառապես նրանով, ինչն ուղղակի առաջնորդում է առ Աստված, այսինքն՝ Սուրբ Գրքի ընթերցանությամբ: Ըստ այդմ՝ Աստվածաշունչը քրիստոնեական դպրոցների ալֆան եւ օմեգան պետք է լինի: Այս դպրոցներում թող Աստծու գիրքը գլխավոր տեղը զբաղեցնի մյուս բոլոր գրքերի շարքում, այնպես որ Տիմոթեոսի օրինակով մանկուց Սուրբ Գիրք սովորած բոլոր քրիստոնյա պատանիները խրատվեն բարեպաշտությամբ (տես Բ Տիմ. Գ 15) եւ կրթվեն հավատքի խոսքերով (տես Ա Տիմ. Դ 6)»:

Նորագույն մանկավարժության հիմնադիր Կոմենսկին (1592–1670 թթ.) քննադատում է իր ժամանակի դպրոցներում պատանիների եւ պարմանուհիների կրթության եղանակը: Ըստ նրա՝ կամ քրիստոնեական դպրոցներից պետք է լիովին դուրս մղվեն հեթանոս հեղինակների ստեղծագործությունները, կամ չափազանց զգուշավորությամբ ուսուցանվեն: Ականավոր մանկավարժը գրում է. «Մեր երեխաները ծնվել են երկնքի համար, վերածնվել Սուրբ Հոգով. ուստի եւ նրանք պետք է դաստիարակվեն իբրեւ ապագա երկնաքաղաքացիներ ու նախեւառաջ գիտելիքներ ձեռք բերեն երկնային, Աստծու, Քրիստոսի, հրեշտակների, Աբրահամի, Իսահակի, Հակոբի եւ այլոց մասին: Թեեւ Աստված շատ է հոգ տարել Իր ընտրյալ ժողովրդի մասին, սակայն չի նշել որեւէ այլ դպրոց, քան այն, որտեղ Ինքն Իրեն կարգել է մեզ ուսուցիչ, մեզ դարձրել Իր աշակերտները, մարգարեությունների ձայնը՝ Իր վարդապետությունը: Նրա խոսքը մեր ճանաչողության ճաճանչափայլ լույսն է, մեր արարքների ամենակատարյալ առաջնորդը եւ երկու դեպքում էլ՝ մեր տկարությունների ամենահուսալի նեցուկը...

Մեր քրիստոնեական արժանապատվությունը (քանի որ Քրիստոսով Աստծու որդիներ ենք դարձել, ընդունել թագավորական քահանայությունն ու հավիտենականության ժառանգությունը) թույլ չի տալիս այնքան նսեմանալ եւ այլասերել մեր անձերն ու մեր երեխաներին, որ սերտ հարաբերություններ հաստատենք հեթանոսների հետ եւ նրանցով գայթակղվենք: Չէ՞ որ թագավորական ու իշխանական ընտանիքների երեխաների վրա դաստիարակներ չեն կարգում պորտաբույծներից, խեղկատակներից ու ծաղրածուներից, այլ լուրջ, խելացի եւ հավատացյալ անձանցից: Իսկ մենք, առանց ամաչելու, թագավորների Թագավորի որդիներին՝ Քրիստոսի կրտսեր եղբայրներին՝ հավիտենականության ժառանգներին, դաստիարակելու ենք տալիս խեղկատակ Պլավտոսին, գայթակղիչ Կատուլլոսին, ամբարիշտ Օվիդիուսին, ամբարիշտ աստվածանարգ Լուկանոսին, անբարոյական Մարցիալիսին եւ ճշմարիտ Աստծուն չճանաչող ու Նրանից չերկյուղող սրանց նմանների ամբոխին: Քանի որ սրանք ապրեցին առանց լավագույն կյանք ունենալու հույսի՝ ոտքից գլուխ ընկղմվելով իրական կյանքի տիղմի մեջ, ապա չեն կարող չկեղտոտել նրանց, ովքեր չափազանց սերտ շփման մեջ են մտնում իրենց հետ: Օ՛հ, բավական է, շատ է խենթություն եղել, քրիստոնյաներ: Ժամանակն է վերջ տալու այս ամենին: Աստված կանչում է մեզ հետեւելու բարուն. արժե անսալ այս կոչին: Քրիստոս՝ Աստծու հավիտենական իմաստությունը, Աստծու որդիների համար դպրոց է հիմնել Իր տանը, ուր ռեկտորի եւ վարիչ-տնօրենի պաշտոնն ստանձնել է Ինքը՝ Սուրբ Հոգին, ուր ուսուցիչներին ու պրոֆեսորներին փոխարինում են մարգարեներն ու առաքյալները: Այստեղ բոլորն էլ օժտված են ճշմարիտ իմաստությամբ, բոլորն էլ խոսքով ու գործով մատնանշում են ճշմարտության եւ փրկության ճանապարհը, բոլորն էլ սուրբ այրեր են: Այստեղ աշակերտները միմիայն Աստծու ընտրյալներն են՝ մարդկանց անդրանիկները՝ Աստծու եւ Նրա Գառան միջոցով թողություն ստացածները: Դպրոցի տեսուչներն ու պահակները հրեշտակներն են, հրեշտակապետերը, երկնային իշխանություններն ու պետությունները (տես Եփես. Գ 10): Այստեղ տրվում է ամենայն մարդկային մտքի եզրահանգումներից գերիվեր գիտելիք՝ ճշմարիտ, ստույգ եւ կատարյալ՝ համահունչ ինչպես այս, այնպես եւ գալիք կյանքի կարիքներին: Քանզի միայն Աստծու շուրթերն են այն աղբյուրը, որից բխում են ճշմարիտ իմաստության բոլոր վտակները, միայն Աստծու երեսն է այն ջահը, որտեղից ճառագում են ճշմարիտ լույսի ճաճանչները, միայն Աստծու խոսքն ունի այն արմատը, որից աճում են ճշմարիտ իմաստության ծիլերը»:

Ի պատասխան այն առարկությունների, թե հեթանոս փիլիսոփաների, հռետորների եւ բանաստեղծների աշխատություններում ու ստեղծագործություններում մեծ իմաստություն է ամփոփված՝ Կոմենսկին ասում է. «Նրանք, ովքեր շրջում են հայացքը լույսից, արժանի են խավարի: Ճիշտ է՝ բուի համար մթնշաղն էլ կեսօր է, սակայն լույսի մեջ ապրելու համար ծնված կենդանիների պարագայում այդպես չէ: Ո՞վ սին մարդ, դո՛ւ, որ լույս ես փնտրում մարդկային ընկալման խավարում, վե՛ր բարձրացրու աչքերդ: Երկնքից՝ լույսի Աստծուց է բխում ճշմարիտ լույսը: Եթե մարդկայինի մեջ ինչ-ինչ բաներ էլ առկայծում կամ փայլում են, ապա դրանք այլ բան չեն, քան փոքրիկ կայծեր, որոնք թեեւ լուսավոր են թվում եւ ինչ-որ բան են խավարում նստածների համար, սակայն բոլորովին անպիտան են մեզ համար, ում ձեռքերին բռնելու են հանձնված՝ Աստծու խոսքի վառ լույս ճառագող ջահերը: Բնության մասին մտորելիս նրանք այս ու այն կողմ են ընկնում՝ բնավ հարցի էության մեջ չթափանցելով: Իսկ Սուրբ Գրքում Ինքը՝ բնության Տերը, բացահայտում է Իր գործերի մեծ գաղտնիքը՝ բացատրելով տեսանելի եւ անտեսանելի արարչագործության բոլոր պատճառները: Երբ փիլիսոփաները խոսում են բարոյականության մասին, նմանվում են սոսնձով փակցված թեւերով թռչնակների, որոնք շարժվում են մեծ դժվարությամբ, բայց եւ բնավ առաջ չեն գնում: Իսկ Սուրբ Գիրքը բովանդակում է առաքինությունների ճշմարիտ նկարագրություններ՝ համոզիչ, մինչեւ ուղնուծուծը թափանցող հորդորներով եւ այդ ամենի կենդանի օրինակներ»: Այնուհետեւ ընդդիմախոսները պնդում են. «Եթե հեթանոսների գրքերը ճշմարիտ աստվածաբանություն չեն սովորեցնում, փոխարենն ուսուցանում են փիլիսոփայություն, որին անհնար է հասու լինել փրկության համար շնորհված Սուրբ Գրքում»: Պատասխանում եմ. «Իմաստության աղբյուրը բարձրյալ Աստծու խոսքն է» (տես Սիր. Ա 5): Ճշմարիտ փիլիսոփայությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստծու եւ Նրա արարածների ճշմարիտ ճանաչողություն, եւ անհնար է այն առավել ճշմարտացիորեն սովորել որեւէ այլ տեղից, քան Աստծու խոսքերից: Թվարկելով Սուրբ Գրքի առավելությունները՝ Օգոստինոս Երանելին նշում է. «Այստեղ է փիլիսոփայությունը, քանզի ամենայն կեցության պատճառ արարիչ Աստծու մեջ է: Այստեղ է բարոյագիտությունը, որովհետեւ լավ եւ ազնիվ կյանքն ամբողջանում է այն ժամանակ, երբ սիրում են այն, ինչ հարկ է սիրել, այսինքն՝ Աստծուն ու մերձավորին, եւ այնպես, ինչպես հարկ է սիրել: Այստեղ է տրամաբանությունը, քանզի բանական հոգու ճշմարտությունն ու լույսն Աստված է: Այստեղ է նաեւ առավել գովասանքի արժանի պետական բարիքը, քանզի պետությունը լավագույնս պահպանվում է հավատքի եւ սերտ համաձայնության հիմքով ու միությամբ, ընդ որում՝ սիրո նպատակը համընդհանուր բարիքն է, իսկ վսեմագույն եւ ճշմարտագույն բարիքը՝ Աստված: Արդեն այս հարյուրամյակում ոմանք ապացուցել են, որ փիլիսոփայական բոլոր գիտությունների եւ արվեստների հիմքն առավելապես Սուրբ Գրքում է, քան որեւէ այլ տեղում: Սուրբ Հոգու տեսչությունը պարզապես զարմանք է հարուցում. ճիշտ է՝ Նա նախեւառաջ ձգտում է լուսավորել անտեսանելին ու հավիտենականը, սակայն, այդուհանդերձ, այստեղ եւ այնտեղ բացահայտում է բնականն ու արհեստականը, առաջնորդում ամեն մի խոհեմ խորհուրդ եւ արարք: Հեթանոս փիլիսոփաների երկերում հազիվ թե հանդիպի այս ամենի ստվերը»:

Հերքելով այն առարկությունները, թե պատանիները գեթ հանուն ոճագեղության, պետք է ընթերցեն եւ ուսումնասիրեն հեթանոս հեղինակների ստեղծագործությունները, Կոմենսկին նկատում է. «Մի՞թե միայն հեթանոսները կարող են հասկանալ խոսքի նրբագեղությունը: Խոսքի ամենակատարյալ նկարիչը Նա է, Ով ցանել է այն, այսինքն՝ Սուրբ Հոգին, Որի խոսքերը մեղրից քաղցր են, երկսայրի սրից սուր, երկաթ հալեցնող հրից թեժ, ժայռեր փշրող մուրճից ծանր, որոնք ընկալում եւ ազդարարում են Աստծու սրբերը: Մի՞թե միայն հեթանոսներն են պատմում հիշարժան պատմություններ: Մեր Գիրքը լեցուն է առավել ճշմարիտ եւ զարմանահրաշ պատմություններով: Մի՞թե միայն նրանք կարող են փոխաբերություններ, դարձվածքներ, ակնարկներ, այլաբանություններ, առակներ ու ասույթներ գործածել: Այս ամենից լիուլի մենք էլ ունենք: Միայն բորոտը կարող է երեւակայել, որ Դամասկոսի Նաբանա եւ Փարփարա գետերը Հորդանանից եւ Իսրայելի բոլոր ջրերից լավն են (տես Դ Թագ. Ե 12), կարճատեսը՝ որ Օլիմպոսը, Հելիկոնը, Պառնասն առավել բարետես են, քան Սինայը, Սիոնը, Հերմոնը, Թաբորը եւ Ձիթենյաց լեռը, միայն խուլը՝ որ Օրփեոսի, Հոմերոսի, Վերգիլիոսի քնարն առավել քաղցրալուր է հնչում, քան Դավթի տավիղը: Միայն փչացած քիմքին նեկտարը, ամբրոսիան եւ կաստալյան աղբյուրները կարող են ավելի համեղ թվալ, քան երկնային իսկական մանանան ու իսրայելական աղբյուրները: Միայն այլասերված սրտին կարող են առավել մեծ հաճույք պատճառել չաստվածների, չաստվածուհիների, մուսաների եւ քարիսների (հռոմեական դիցաբանության մեջ ստացել են Գրացիաներ անվանումը) անունները, քան զորությունների Տիրոջ՝ Հիսուս Փրկչի երկրպագելի անունը եւ Սուրբ Հոգու բազմապիսի շնորհները: Միայն կույր հույսն է առավել սիրահոժար ճախրում Էլիսիոնի դաշտերում, քան դրախտի այգիներում: Քանզի այնտեղ ամեն ինչ հեքիաթ է, ճշմարտության ստվեր, իսկ այստեղ՝ ճշմարտություն եւ իրականություն...

Առարկում են, թե Աստվածաշնչի գրքերը չափազանց խրթին են պատանիների համար, եւ այդ իսկ պատճառով, քանի դեռ նրանց մտածողությունը չի ձեւավորվել, այլ գրքեր են առաջարկում: Պատիր է այն պնդումը, թե Սուրբ Գիրքը, չափազանց վսեմ լինելով, իբրեւ թե մանկական ըմբռնումից գերիվեր է, կամ էլ Աստված չի կարողացել հարմարեցնել Իր խոսքը մեր ընկալմանը (տես Բ Օրենք ԼԱ 11–13): Չէ՞ որ Դավիթն ասում է. «Տիրոջ վկայությունն ստույգ է եւ իմաստուն է դարձնում տհասներին» (Սաղմ. ԺԸ 8), իսկ Պետրոս առաքյալն Աստծու խոսքն անվանում է «նորածին երեխաների կաթ»՝ շնորհված «նրա միջոցով փրկության համար աճելու» (տես Ա Պետ. Բ 2) եւ զորանալու: Տե՛ս, ուրեմն, որ Աստծու խոսքը Նրա կաթն է՝ շատ նուրբ, քաղցր եւ օգտակար սնունդ Աստծու նորածին երեխաների համար: Ինչո՞ւ հակառակել Աստծուն. մանավանդ որ հեթանոսական կերակուրը կոշտ է եւ ամուր ատամներ է պահանջում, որոնք, այնուամենայնիվ, կամաց-կամաց փշրում է: Այդ իսկ պատճառով Սուրբ Հոգին Դավթի շուրթերով կանչում է երեխաներին Իր դպրոցը. «Եկեք, Իմ որդիներ, եւ լսեք ինձ. Ես կսովորեցնեմ ձեզ Տիրոջ երկյուղը» (Սաղմ. ԼԳ 12): Վերջապես կարող ենք խոստովանել, որ Սուրբ Գրքում, անշուշտ, խորություններ կան, սակայն այնպիսիք, որոնցում, ինչպես դիպուկ նկարագրել է Օգոստինոս Երանելին, փղերն ընկղմվում են, իսկ գառնուկները՝ լողում: Այս խոսքը նա ասել է զուգահեռներ անցկացնելիս Սուրբ Գրքի վրա մեծագույն հպարտությամբ հարձակումներ գործող այս աշխարհի իմաստունների եւ Քրիստոսի որդիների միջեւ, որոնք խոնարհ սրտով ու սովորելու պատրաստակամությամբ են ձեռնամուխ լինում Աստվածաշնչին: Բաց ծովում իսկույն լողալու անհրաժեշտություն չկա. կարելի է աստիճանաբար դա անել: Սկզբում պետք է գնալ քրիստոնեական վարդապետության ափով, ապա ծանծաղուտով՝ ուսումնասիրելով այն սրբազան պատմությունները, բարոյական ասույթները եւ այլն, որոնք դյուրամատչելի են եւ նախապատրաստում են հաջորդ՝ առավել վսեմ բնագրերի ըմբռնումը: Ի վերջո, երեխաները կարող կլինեն լողալ նաեւ հավատքի խորհուրդների միջոցով: Այսպիսով՝ մանկուց անմնացորդ նվիրվելով Սուրբ Գրքի սերտմանը՝ նրանք առավել դյուրին խույս կտան աշխարհի այլասերման որոգայթից եւ իմաստուն կդառնան «փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է» (Բ Տիմ. Գ 15): Քանզի նա, ով նվիրվում է Աստծուն եւ նստելով Քրիստոսի ոտքերի մոտ՝ խոնարհեցնում իր ականջներն ի վերուստ իջնող իմաստությունը լսելու, անպայման Սուրբ Հոգու շնորհներին կարժանանա՝ ճշմարիտ ճանաչողությամբ լուսավորվելու եւ հստակ լույսի ներքո փրկության շավիղները տեսնելու համար: Չեմ խոսում այն հեղինակների երկերի մասին, որոնք պարտադրում են քրիստոնյա երիտասարդությանը (Տերենտիոս, Կիկերոն, Վերգիլիոս եւ այլք), եւ հենց այնպիսին են, ինչպիսին որ ցանկանում են ներկայացնել Սուրբ Գիրքը, այսինքն՝ պատանիների համար խրթին եւ դժվարըմբռնելի: Չէ՞ որ դրանք գրված են ոչ թե երեխաների, այլ հասուն դատողության տեր մարդկանց համար, որոնք շրջում են թատրոններում եւ ֆորումներում (իմա՛ հրապարակներ): Հետեւաբար՝ ինքնին հասկանալի է, որ դրանք այլոց համար բնավ էլ օգտակար չեն: Անկասկած, հասուն տարիքում մեկ անգամ Կիկերոնի երկն ընթերցելն առավել օգտակար է, քան, ասենք, պատանեկության տարիներին այն ծայրից ծայր անգիր անելը: Ինչո՞ւ այս հեղինակների ստեղծագործությունների ուսումնասիրությունը չհետաձգել մինչեւ մի հարմար ժամանակ նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն, եթե դրա կարիքն առհասարակ կա: Ամենակարեւորը, սակայն, ինչպես արդեն վերն ասել ենք, քրիստոնեական դպրոցներում երկնքի, այլ ոչ թե երկրի քաղաքացիներ պատրաստելն է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այնպիսի ուսուցիչներ կարգել, որոնք երկրայինից առավել երկնայինը, աշխարհիկից առավել սրբազանն ուսուցանեն»:

Շարունակելի

Նյութը պատրաստեց
Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆԸ

Հայ Եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ԺԹ դարի երկրորդ կեսին

Սկիզբը՝ 2022-ի թիվ 23, 2023-ի թիվ 2–3, 13–15

Դ. ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Հոգեւոր կրթություն ստանալու գործում ինչպես Հայաստանում, այնպես եւ քրիստոնեական մշակույթ ունեցող գրեթե յուրաքանչյուր երկրում ուրույն տեղ ունեին վանական դպրոցները: Վանական դպրոցները համեմատաբար փոքրաթիվ էին, քան ծխական, վիճակային կամ թեմական կրթօջախները: 1800-ական թվականների սկզբներին Արեւելյան Հայաստանում գործող վանական դպրոցների շարքում հիշատակվում է նաեւ Ս. Էջմիածնի՝ 1640 թ. հիմնադրված ժառանգավորաց վարժարանը, որը գոյության ողջ ընթացքում նպաստում է կրթության կազմակերպմանը:

Ծանոթանալով վարժարանի պատմությանը՝ նկատում ենք, որ ԺԹ դարի առաջին կեսին վարժարանն ուսումնական առումով նշանակալի հաջողություններ չի արձանագրում: Սակայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Սինոդի ուշադրության կենտրոնում լինելով՝ ժամանակի ընթացքում բոլոր խնդիրները կարգավորվում են: Համաձայն 1845 թ. հաստատված «վասն հոգեւոր դպրոցին Էջմիածնի» կանոնադրության՝ վարժարանում պետք է ուսանեին միայն հոգեւորականների ընտանիքների զավակները եւ ապագա եկեղեցական սպասավորները, հաճախ, բացառության կարգով, թույլատրում էին սովորել նաեւ աշխարհիկ ծագում ունեցող սահմանափակ թվով աշակերտների: Մ. Թաղիադյանը հաղորդում է, որ ժառանգավորաց դպրոցի աշակերտները բաժանվում էին երկու խմբի՝

ա. որդեգիրներ, որոնք լիովին գտնվում էին վանքի հոգածության ներքո՝ անվճար ստանալով ոչ միայն կրթություն, այլ նաեւ կացարան, սնունդ եւ հագուստ,

բ. երթեւեկներ, որոնք առանց ապրուստի միջոցների՝ ուսանում էին դպրոցում (տես *Մ. Թաղիադեան,* Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 111–114):

Վարժարանում կրթական նշանակալի գործունեություն էին ծավալում ժամանակի հայտնի մանկավարժներ Մ. Թաղիադյանը, Կ. Վասակյանը, Մ. Պատկանյանը եւ այլք: 1836 թ. «Պոլոժենիեն» պաշտոնապես ճանաչում էր հոգեւոր դպրոցների գոյությունը, ինչը ներքին կարգուկանոն սահմանելու եւ ուսումնական ծրագրեր մշակելու լայն հնարավորություն էր ընձեռում:

1830–1860-ական թվականներին վարժարանում սովորող աշակերտների թիվը տատանվում էր 20–50-ի սահմանում, դասավանդում էր 6 ուսուցիչ: Վարժարանում ուսման տեւողություն սահմանված չէր. այն պայմանավորված էր դասավանդվող առարկաների քանակով եւ յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների նախնական պաշարով ու առաջադիմությամբ: Վարժարանում, բացի հայոց լեզու, հայ ժողովրդի պատմություն, թվաբանություն, երաժշտություն, Աստվածաշնչի սերտողություն եւ մի շարք այլ առարկաներից, պարտադիր կերպով դասավանդվում էին ռուսերեն եւ Ռուսաստանի աշխարհագրություն: Ակներեւ է, որ հայկական բոլոր կարգի դպրոցների նկատմամբ ցարական իշխանությունների քաղաքականությունը գրեթե նույնն էր. ԺԹ դարում եւ հատկապես դարի երկրորդ կեսին հայկական դպրոցներում առաջնային դասավանդվող առարկաները ռուսերենն ու Ռուսաստանի աշխարհագրությունն էին: Ս. Խուդոյանը տեղեկություններ չի հաղորդում, թե ինչ պատճառով է փակվել վարժարանը, միայն նշում է, որ «1813-ին Ներսես Աշտարակեցին վերաբացում է ժառանգավորաց դպրոցը, որն իր գոյությունը պահպանում է նաեւ Գեւորգյան ճեմարանը հիմնելուց հետո էլ....» (*Ս. Խուդոյան,* Արեւելահայ դպրոցները 1830–1920 թթ., Երեւան, 1987, էջ 157): Տեղեկությունները վարժարանի վերաբերյալ սակավ են. 1882 թ. կրթօջախը միացվել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանին:

Դեռեւս 1869 թ. Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի (1866–1882 թթ.) կաթողիկոսը հաստատել էր վանական դպրոցների կանոնադրությունը: Կանոնադրության առաջին կետը ներկայացնում էր վանական դպրոցի նպատակը՝ «....պատրաստել զաշակերտս վասն ուսումնարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի առ բարւօք կրթութիւն ի բարձրագոյն ուսմունս կարեւորս կուսակրօն, ընտիր, բարեկիրթ եւ հանճարաւոր եկեղեցականաց» («Արարատ» ամսագիր, 1869, թիւ 5–12, էջ 4): Կանոնադրությունը բաղկացած էր հետեւյալ մասերից՝ «Տեսչութիւն վանական դպրոցաց», «Աշակերտք», «Ուսանելի առարկայք», «Հոգեւոր կրթութիւնք» եւ «Կարգ կենցաղավարութեան աշակերտաց»: Կանոնադրության համաձայն՝ վանական դպրոցներն ունենալու էին երեք դասարան՝ «....երրեակ դասարանք են ի դպրոցին»: Առաջին դասարանում աշակերտներն ուսանում էին քրիստոնեական վարդապետություն, հայոց պատմություն



(համառոտ), թվաբանություն (առաջին մաս), աշխարհագրություն (համառոտ) եւ վայելչագրություն, երկրորդում՝ Հին եւ Նոր կտակարանների պատմություն, քրիստոնեական վարդապետություն (ընդարձակ), շարականների երգեցողություն եւ «թարգմանութիւն յաշխարհիկ բարբառոյ ի գրոցն, եւ ի գրոց լեզուէ յաշխարհիկն». ի դեպ՝ վերջին առարկան հոգեւոր դպրոցի համար մշակված կրթական ծրագրերի ուսումնասիրության ընթացքում առաջին անգամ է հանդիպում: Երրորդ դասարանում դասավանդվում էին Եկեղեցու եւ հայոց պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն եւ շարականների երգեցողություն: ➥ էջ 8

Յակոբ Պատրիարք Նալեան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

Սկիզբը՝ թիւ 9–15

Հաւատքի աստիճաններուն մեկնութիւնը

Իններորդ հարցում. *սիրոյ մասին, որ աստուածաբանական երրորդ առաքինութիւնն է:*

Սէրը օրէնքներու լրումն է, որովհետեւ առանց սիրոյ՝ մարդ ինչ գործի որ ձեռնարկէ, անկատար կը ձգէ, սակայն եթէ մարդ մը սէր ունենայ, Աստուծոյ օրէնքն ու պատուիրաններն ի կատար կ՚ածէ ու կ՚ամբողջացնէ: Դարձեալ՝ սէրը՝ սուրբ սիրտէ զԱստուած, ինքզինք եւ իր ընկերը սիրելն է: Սուրբ սիրտէ այն պատճառով կ՚ըսեմ, որովհետեւ մարդ մը, որ մեղքերու մէջ է, չի՛ կրնար սուրբ սիրտով զԱստուած սիրել, քանի որ սիրտը չար խորհուրդներով պղծուած է:

Նաեւ՝ մարդ պէտք է ինքզինք սուրբ սիրտով եւ սուրբ սիրով սիրէ, ո՛չ թէ ինքզինք սիրէ աշխարհի ունայն եւ խաբուսիկ բաներով, այլ բարի գործերով:

Տակաւին, մարդ Աստուծոյ համար պէտք է իր ընկերը սիրէ, քանի որ Աստուծոյ պատկերով է ան. արքայութեան համար, քանի որ արքայութեան մէջ ինծի ընկերակից է. նմանութեան համար, որովհետեւ իւրաքանչիւր նման բան իր նմանը կը սիրէ. եղբայրութեան համար, քանի որ բոլորս ալ մէկ հօր՝ Ադամի զաւակներն ենք:

Դարձեալ՝ սէրը պէտք է անկեղծաւոր բարութեամբ ըլլայ, քանի որ Յուդան սիրոյ նշանով մատնեց իր Վարդապետը՝ ըսելով՝ ողջո՛յն Քեզի, Վարդապե՛տ: Իսկ Յովաբ սպարապետը Դաւիթ մարգարէին, Աբէնէր սպարապետը Սաւուղին սիրոյ նշանով սպանեց: Այսպէս ալ Հերովդէսը երկրպագութեան պատճառով կ՚ուզէր նորածին Թագաւորը՝ զՔրիստոս սպանել: Այս պատճառով այսպիսի մարդոց համար կ՚ըսուի, թէ՝ լեզուն սիրուն, սիրտը սլաք՝ մեծամեծ մեղքերու մայրաքաղաք:

Տակաւին, սէրը երեք կերպ է. որդիական, եղբայրական եւ բնական: ԶԱստուած որ կը սիրենք, որպէս Աստուած արժան ու պատշաճ է սիրոյ, ասիկա որդիական է: Ընկերը,

որ կը սիրենք Աստուծոյ համար, ասիկա եղբայրական է: Իսկ որ մեզ կը սիրենք, որպէսզի չարիքի չհանդիպինք, ասիկա բնական է: Տակաւին, չար սէր ալ կայ, որ աշխարհական կը կոչուի:

Առանց սիրոյ բարի գործերը պատկերներ են եւ ո՛չ կենդանի.

Ով որ զԱստուած, ինքզինք ու իր ընկերը չի՛ սիրեր, կը մեռնի:

Տասներորդ հարցում. *այն մասին, թէ ինչ է բարոյական առաքինութիւնը:*

Բոլոր առաքինութիւնները եօթն են. երեքը՝ աստուածային ու աստուածաբանական կը կոչուին, որովհետեւ մարդս դէպի Աստուած կ՚ուղղեն ու դէպի Աստուած կ՚առաջնորդեն, հետեւաբար հաւատքով կը ճանչնանք, յոյսով կը դիմենք ու սիրով կ՚ըմբռնենք: Իսկ չորսը, այսինքն՝ խոհեմութիւնը, քաջութիւնը (արիութիւն), ողջախոհութիւնն ու արդարութիւնը մարդկային եւ բարոյական առաքինութիւններ կը կոչուին, քանի որ մարդկային հոգին ու մարմինը կանոնաւորաբար բարեպէս կը կարգաւորեն, որովհետեւ սովորութեան պատճառով մարդուն կամքը կը խոնարհի թէ՛ դէպի չարը եւ թէ՛ դէպի բարին: Քանի որ ինչպէս շատ գրելէն լաւ գրագիր կ՚ունենանք, այդպէս ալ շատ ու յաճախակի բարի գործեր գործելով՝ բարի կ՚ըլլանք, որովհետեւ սովորութիւնը՝ թէ չար ու թէ բարի, կարծես թէ երկրորդ բնաւորութիւնը կ՚ըլլայ մարդուն:

Արդարեւ, բարոյական առաքինութիւնը միջին ու արքունական ճանապարհ է, որ մարդուն հոգին մեղքերու չարիքէն ու անխոհեմ եւ հապճեպով կատարուած բարի գործերէն կը քաշէ ու մարդս առաքինութեան միջին ճանապարհին կը մօտեցնէ: Օրինակով ըսեմ. օր մը սուրբ հայր Անտոնն իր խեղճուկ միաբանները դուրսը՝ ապահով տեղ մը հանեց, որպէսզի քիչ մը զովանան. սեւ եթովպացի որսորդ մարդ մը տեսաւ, շփոթեցաւ ու ըսաւ, թէ՝ այ հա՛յ, մեր լսածին պէս չելաւ. մ՚այս է սուրբ հայր Անտոնը, որուն ձայնն ամբողջ աշխարհը բռնած է, իսկ ինք հաճոյքի մէջ մխրճուած է այս ապահով ու օդասուն վայրին մէջ:

Սուրբ հայր Անտոնը մարգարէական հոգիով իմացաւ այդ մարդուն մտածումը, իր մօտ կանչեց ու հարցուց անոր.

— Ի՞նչ գործ ունիս այս անապատին մէջ:

Ան պատասխանեց.

— Նետով ու աղեղով որսի ելած եմ:

Սուրբ Անտոնն ըսաւ.

— Լաւ մը լարէ՛ նետդ ու աղեղդ:

Ան լարեց զայն:

Ապա հայր Անտոնն ըսաւ.

— Լաւ մը քաշէ:

Ան ալ քաշեց:

Սուրբ Անտոնն ըսաւ.

— Չէ՛, այդպէս չէ: Շատ քաշէ, ինչքան ոյժ որ ունիս:

Ան դարձաւ ու ըսաւ հայր Անտոնին.

— Եթէ շատ քաշեմ, լարն ու աղեղը կը կտրուին:

— Լաւ, եթէ այդպէս է,— ըսաւ հայր Անտոնը,— վարի մասէն քաշէ:

Որսորդն ըսաւ.

— Վարի մասէն եթէ քաշեմ, նետն իր նշանին չի՛ հասնիր:

— Վա՜յ, այդպէ՞ս է,— ըսաւ հայր Անտոնը,— արդարեւ, ես ալ եթէ խեղճ միաբաններուս անընդհատ սեղմեմ ու շունչ չտամ, կը կտրուին ու կը յուսահատին. իսկ եթէ ընդհանրապէս թոյլ [ազատ] ձգեմ, իրենց նշանին՝ երկինքի արքայութեան չեն հասնիր:

Հիմա քեզի նոյնն ըսեմ, ինչ Սուրբ Անտոնը եթովպիացիին ըսաւ.

Բարոյական առաքինութիւն են նետն ու աղեղը, իսկ դուն՝ նետահար եւ աղեղի օգնութեամբ նետ արձակող անձ: Եթէ չափէն աւելի կամեցար առաքինանալ՝ մարմինդ մինչեւ մահ ճնշելով, արդարեւ լարը կտրեցիր ու արքունի ճանապարհէն դուրս ելար: Իսկ եթէ ընդհանրապէս թոյլ ու ծոյլ մնացիր, մարմինդ պարարեցիր ու հոգիիդ կարիքները չհոգացիր, որով նշանիդ՝ արքայութիւն չժամանեցիր:

Այս պատճառով Սուրբ Գրիգոր Աստուածաբանը կ՚ըսէ, թէ առաքինութիւնը միջոցին մէջ կը կայանայ: Ով որ երկու կողմերէն ինկած է, չարութեան մէջ է, այս է, որ զղջումին մէջ կ՚ըսենք՝ աջ ու ձախ խոտորելով: Իսկ բարոյական առաքինութիւններն աջէն ու ձախէն մարդուն հետ կը քաշեն ու դէպի միջին ճանապարհ կ՚ուղղեն անոր հոգին:

Հիմա ըսենք, թէ քանիսն են բարոյական առաքինութիւնները:

Բարոյական առաքինութիւնները չորսն են.

Առաջին՝ խոհեմութիւն:

Երկրորդ՝ քաջութիւն (արիութիւն):

Երրորդ՝ ողջախոհութիւն:

Չորրորդ՝ արդարութիւն:

Խոհեմութիւնը բանականին առաքինութիւնն է:

Քաջութիւնը՝ ցասմնականին:

Ողջախոհութիւնը՝ ցանկականին:

Արդարութիւնը՝ ամբողջ անձին:

Այն ատեն կատարեալ բարոյական առաքինի կ՚ըլլաս,

Երբ հոգիդ արդարի բարութիւններով երանեալ կ՚ըլլայ:

Շարունակելի

Փոխադրութիւնը՝
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022-ի թիվ 19 – 2023-ի թիվ 10, 15

Նամակ երեսունյոթերորդ
ԱՐՎԵՍՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

Յուրաքանչյուր երկիր արվեստի համալիր է: Մշակույթների կամ մշակույթի հուշարձանների վիթխարի համալիր է նաեւ Խորհրդային Միությունը: Քաղաքները Խորհրդային Միությունում, որքան էլ որ զանազան են, մեկուսացված չեն միմյանցից: Մոսկվան եւ Պետերբուրգը ոչ թե պարզապես նման են, այլ հակադրվում են միմյանց, հետեւաբար՝ փոխազդում: Պատահական չէ, որ դրանք միացած են այնքան ուղիղ երկաթգծով, որ գնացքով գիշերն առանց շրջադարձերի եւ միայն մեկ կանգառով ճանապարհորդելով ու հասնելով Մոսկվայի կամ Պետերբուրգի կայարան՝ տեսնում եք գրեթե նույն կայարանի շենքը, որը ձեզ ճանապարհել էր երեկոյան. Պետերբուրգում Մոսկովյան կայարանի եւ Մոսկվայի՝ Պետերբուրգյանի արտաքին տեսքը նույնն է: Կայարանների նմանությունը, սակայն, ընդգծում է քաղաքների կտրուկ տարբերությունը՝ ոչ պարզ, այլ միմյանց փոխլրացնող տարբերությունը:

Նույնիսկ թանգարաններում արվեստի գործերը պարզապես չեն պահվում, այլ կազմում են մշակութային որոշ համալիրներ՝ կապված քաղաքների եւ երկրի պատմության հետ առհասարակ: Թանգարանների կազմությունն ամենեւին պատահական չէ, թեեւ դրանց հավաքածուների պատմության մեջ քիչ չեն որոշ պատահականությունները: Պատահական չէ, օրինակ, որ Պետերբուրգի թանգարաններում այդքան շատ են հոլանդական (շնորհիվ Պետրոս Ա-ի), ինչպես նաեւ ֆրանսիական գեղանկարները (շնորհիվ ԺԸ դարի եւ ԺԹ դարասկզբի պետերբուրգյան ազնվականության):

Սակայն նայեք այլ քաղաքներում: Նովգորոդում արժե տեսնել սրբապատկերները: Այն հին ռուսական գեղանկարչության երրորդ ամենամեծ եւ արժեքավոր կենտրոնն է: Կոստրոմայում, Նիժնի Նովգորոդում եւ Յարոսլավլում արժե տեսնել ԺԸ եւ ԺԹ դարերի ռուսական գեղանկարչությունը (դրանք ռուսական ազնվական մշակույթի կենտրոններն են), իսկ Յարոսլավլում նաեւ ԺԷ դարի «վոլգյանը», որն այստեղ ներկայացված է այնպես, ինչպես ոչ մի այլ տեղ:

Բայց եթե դիտարկեք մեր ողջ երկիրը, կզարմանաք քաղաքների եւ դրանցում պահվող մշակույթի բազմազանությամբ եւ ինքնատիպությամբ. թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում եւ պարզապես հենց փողոցներում, չէ որ գրեթե ամեն մի հին տուն գանձ է: Որոշ տներ եւ ամբողջական քաղաքներ արժեքավոր են իրենց փայտե փորագրություններով (Տոմսկ, Վոլոգդա), մյուսները՝ առափնյա փողոցների, ծառուղիների հիասքանչ հատակագծերով (Կոստրոմա, Յարոսլավլ), երրորդները՝ քարե առանձնատներով, չորրորդները՝ զարմանահնար եկեղեցիներով:

Սակայն շատ բան է նրանց միավորում: Ռուսական քաղաքների ամենաբնորոշ առանձնահատկություններից է դրանց՝ գետի բարձր ափին տեղակայված լինելը: Քաղաքը տեսանելի է հեռվից եւ ասես ներքաշված է գետի շարժման մեջ. Վելիկիյ Ուստյուգ, վոլգյան քաղաքներ, Օկայի երկայնքում գտնվող քաղաքներ: Այդպիսի քաղաքներ կան նաեւ Ուկրաինայում. Կիեւ, Նովգորոդ-Սեւերսկի, Պուտիվլ:

Այդ Հին Ռուսիայի ավանդույթներն են. Ռուսիա, որից սկիզբ են առել Ռուսաստանը, Ուկրաինան եւ Բելառուսը, իսկ հետո նաեւ Սիբիրը՝ Տոբոլսկի ու Կրասնոյարսկի հետ...

Քաղաք՝ բարձր ափին, հավերժ շարժման մեջ: Այն «լողում» է գետի կողքով: Եվ դա նույնպես Ռուսիային բնորոշ հայրենի լայնարձակ տարածությունների զգացումն է:

Երկրում առկա է ժողովրդի, բնության ու մշակույթի միասնություն:

Մեր քաղաքների ու գյուղերի բազմազանության պահպանումը, դրանցում պատմական հիշողության, դրանց ընդհանուր ազգային եւ պատմական յուրօրինակության պահպանումը մեր քաղաքաշինության կարեւորագույն խնդիրներից է: Ողջ երկիրը մշակութային վիթխարի համալիր է: Այն պետք է պահպանվի իր զարմանահրաշ հարստությամբ: Մարդուն իր քաղաքում եւ գյուղում դաստիարակում է ոչ միայն պատմական հիշողությունը, այլ նաեւ հայրենի երկիրն իր ամբողջությամբ: Այժմ մարդիկ ապրում են ոչ միայն իրենց «վայրում», այլեւ ողջ երկրում, եւ ոչ միայն իրենց դարով, այլեւ իրենց պատմության բոլոր դարերով:

Նամակ երեսուներորդ
ԱՅԳԻՆԵՐ ՈՒ ՊՈՒՐԱԿՆԵՐ

Մարդու փոխազդեցությունը բնության, բնապատկերի հետ միշտ չէ, որ տեւում է դարեր ու հազարամյակներ, եւ միշտ չէ կրում «բնական-անգիտակցական» բնույթ: Բնության մեջ հետք է մնում ոչ միայն մարդու գյուղական աշխատանքից, եւ բնությունը ոչ միայն ձեւավորում է վերջինիս աշխատանքը. երբեմն մարդը գիտակցաբար ձգտում է վերափոխել իր շրջապատի բնատեսարանը՝ կառուցելով այգիներ ու պուրակներ:

Այգիներն ու պուրակներն ստեղծում են մարդու եւ բնության մի տեսակ «կատարյալ» փոխազդեցություն. «կատարյալ»՝ մարդկության պատմության ամեն մի փուլի համար, այգի-պուրակային ստեղծագործության յուրաքանչյուր հեղինակի համար:

Եվ այստեղ կցանկանայի մի քանի խոսք ասել այգիների եւ պուրակների արվեստի մասին, որն իր էությամբ միշտ չեն լիովին ընկալել մեկնաբանները, մասնագետները (այգեգործության տեսաբանները եւ գործնականացնողները):

Այգի-պուրակային արվեստը բոլոր արվեստներից ամենագրավիչն ու մարդու վրա ամենամեծ ազդեցություն գործողն է: Նման պնդումն առաջին հայացքից տարօրինակ է թվում: Կարծես թե դժվար է համաձայնել դրա հետ: Իսկապես ինչո՞ւ այգի-պուրակային արվեստը պետք է առավել ազդեցիկ լինի, քան պոեզիան, գրականությունն իր ամբողջության մեջ, փիլիսոփայությունը, թատրոնը, գեղանկարչությունը եւ այլն: Բայց անաչառորեն մտածեք եւ հիշեք ձեր տպավորություններն ամենքիս համար պատմական մեծարժեք այգիներ այցելությունից, նույնիսկ եթե դրանք անխնամ են: Գնում եք այգի հանգստանալու՝ առանց դիմադրության տրվելու տպավորություններին, շնչելու մաքուր օդ՝ հագեցած գարնան կամ աշնան, ծաղիկների ու խոտերի բույրերով: Այգին բոլոր կողմերից շրջապատում է ձեզ: Դուք եւ այգին դեմ հանդիման եք, այգին ցուցադրում է ձեզ նորանոր տեսարաններ. բացատներ, բոսկետներ, ծառուղիներ, հեռապատկերներ, եւ դուք զբոսնելով՝ միայն դյուրին եք դարձնում այգու ինքնացուցադրումը: Լռությունը պարուրում է ձեզ, եւ լռության մեջ առանձնահատուկ սրությամբ երեւան են գալիս հեռվում գարնանային սաղարթների աղմուկը կամ ոտքերիդ տակ աշնանային տերեւների խշրտոցը, լսվում է թռչունների երգեցողությունը կամ ճյուղիկի թեթեւ շաչյունը մոտակայքում, որոշ հնչյուններ հեռվից են ձեզ հասնում եւ ստեղծում տարածության ու լայնարձակության յուրօրինակ զգացողություն: Ձեր բոլոր զգայարանները բաց են տպավորությունների ընկալման համար, եւ այդ տպավորությունների փոփոխությունն ստեղծում է առանձնահատուկ ներդաշնակություն՝ գույների, ծավալների, հնչյունների եւ նույնիսկ զգացողությունների, որոնք տալիս են օդը, քամին, մառախուղը, ցողը...

Բայց ի՞նչ գործ ունի այդտեղ մարդը, կհարցնեն ինձ: Չէ՞ որ դա այն է, ինչը բնությունն է տալիս, այն, ինչը կարող եք ընկալել, նույնիսկ ավելի մեծ ուժով, անտառում, լեռներում, ծովի ափին, այլ ոչ միայն այգում:

Ո՛չ, այգիներն ու պուրակներն այն կարեւոր սահմանն են, որտեղ միավորվում են մարդն ու բնությունը: Այգիներն ու պուրակները հավասարապես կարեւոր են թե՛ քաղաքում եւ թե՛ քաղաքի սահմաններից դուրս: Պատահական չէ, որ այդքան հրաշալի պուրակներ կան մեր հայրենի Մերձմոսկովյան վայրերում: Չկա առավել գրավիչ, հափշտակիչ, հուզիչ բան, քան մարդկայինը բնություն ներմուծելը, իսկ բնությունը՝ հանդիսավորապես «ձեռքից բռնած», մարդկային հասարակություն բերելը. նայեք, հիացեք, ուրախացեք:

Եվ որքան վայրի է բնությունը, այնքան ավելի սուր եւ խորն է նրա միությունը մարդու հետ: Ահա թե ինչու են այդքան ահռելի տպավորություն գործում Ալուպկայում

Վորոնցովի գցած Ղրիմյան այգին եւ վիբորգյան «Մոն ղեպո» («Իմ հանգստություն») այգին՝ Նիկոլայի բարոնական տոհմի տիպիկ ռուսական կալվածքում: Ալուպկայում՝ այգու վերեւում, կուտակվել եւ «իրենց են ցույց տալիս» լեռները, իսկ ներքեւում՝ հսկայական քարերին են զարնվում Սեւ ծովի ալիքները: «Մոն ղեպո» այգում՝ մերկ կարմիր գրանիտե ժայռերի վրա, սոճիներ են աճում, անվերջանալի տեսարաններ են բացվում դեպի խութակղզիները՝ դրանց ջրային կապույտում լողացող կղզյակներով հանդերձ:

Բայց այս եւ մյուս այգում էլ, բնության ողջ վեհությամբ հանդերձ, ամենուր տեսանելի է մարդու բանական ձեռքը, եւ տերերի հարմարավետ ապարանքները բարեհամբույր պսակում են շրջակա բնատեսարանի նախաստեղծ վայրությունը:

Պատահական չէ, որ Պետրոսը ջրանցքներով ծովը հասցնում էր քաղաքից դուրս գտնվող իր պուրակային ապարանքների մոտ՝ Նովի Պետերգոֆում, Ստրելնայում, Օրանիենբաումում: Ջրանցքները ապարանքներն ու պուրակները կապում էին ծովի հետ ոչ միայն ջրով, այլ նաեւ օդով՝ դեպի ծովը բացվող տեսարանով, եւ ծովի ջուրը մտցնում էին ծառերի եւ Պետրոսի սիրած անուշահոտ ծաղիկների միջավայրը:

Կա եւս մեկ ոլորտ, որը մարդուն տալիս է առավելապես այգին կամ նույնիսկ՝ միայն այգին: Սա պատմական ժամանակի ոլորտն է՝ հիշողությունների ու բանաստեղծական զուգորդումների ոլորտը:

Հենց պատմական հիշողություններն ու բանաստեղծական զուգորդումներն են ամենից շատ մարդկայնացնում բնությունն այգիներում եւ պուրակներում, ինչը դրանց էությունն ու առանձնահատկությունն է կազմում: Պուրակներն արժեքավոր են ոչ միայն այժմ, այլ նաեւ անցյալում դրանց մեջ եղածով: Նրանցում բացվող ժամանակային հեռապատկերը պակաս կարեւոր չէ, քան տեսողական հեռապատկերը: «Հիշողություններ Ցարսկոյե Սելոյում»՝ այսպես է անվանել Պուշկինն իր վաղ շրջանի լավագույն բանաստեղծությունները:



Անցյալի նկատմամբ վերաբերմունքը կարող է լինել երկու տեսակի. ինչպես որոշակի տեսարանի, թատրոնի, ներկայացման, բեմազարդանկարի, եւ ինչպես՝ փաստաթղթի: Առաջին վերաբերմունքը ձգտում է վերարտադրել անցյալը՝ վերակենդանացնել նրա տեսողական պատկերը:

Երկրորդը ձգտում է պահպանել անցյալը թեկուզեւ դրա մասնակի մնացորդներով: Առաջինի դեպքում այգի-պուրակային արվեստում կարեւոր է վերաստեղծել այգու կամ պուրակի արտաքին, տեսողական պատկերն այնպես, ինչպես այն տեսել են դրա կյանքի այս կամ այն պահին: Երկրորդի պարագայում կարեւոր է զգալ ժամանակի վկայությունը. կարեւոր է փաստաթղթավորումը: Առաջինն ասում է՝ այդպիսի տեսք ուներ դա: Երկրորդը վկայում է՝ հենց դա է, հնարավոր է՝ դա եղել է ոչ այսպես, բայց իսկապես դա է. դրանք այն լորենիներն են, այգու այն շինությունները, հենց այն քանդակները: Երկրորդ վերաբերմունքն առավել հանդուրժողական է առաջինի նկատմամբ, քան առաջինը՝ երկրորդի: Անցյալի նկատմամբ առաջին վերաբերմունքը պահանջում է հատել ծառուղու ծեր ծառերը եւ տնկել նորերը. այդպիսի տեսք է ունեցել ծառուղին: Երկրորդ վերաբերմունքն առավել բարդ է. պահպանել բոլոր ծեր ծառերը, երկարացնել դրանց կյանքը եւ դրանց հարեւանությամբ՝ մեռածների փոխարեն, տնկել մատղաշները: ➥ էջ 8

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

↩ էջ 7

Երկու-երեք ծեր փչակավոր լորենիներ հարյուրավոր մատղաշների շարքում կվկայեն. դա հենց նույն ծառուղին է, ահա դրանք՝ հնաբնակները: Իսկ դալար ծառերի մասին հոգ տանելու կարիք չկա. դրանք արագ են աճում, եւ ծառուղին շուտով կստանա իր նախկին տեսքը:

Սակայն անցյալի նկատմամբ երկու վերաբերմունքների միջեւ կա եւս մեկ էական տարբերություն: Առաջինը կպահանջի. միայն մեկ դարաշրջան՝ այգու ստեղծման, դրա ծաղկման կամ որեւէ բանով նշանավորվելու դարաշրջանը: Երկրորդը կասի. թող ապրեն բոլոր դարաշրջանները, այսպես թե այնպես դրանք նշանակալից են, արժեքավոր է այգու կայնքն իր ամբողջության մեջ, արժեքավոր են զանազան դարաշրջանների եւ այս վայրերը գովերգած տարբեր բանաստեղծների մասին հիշողությունները. եւ վերականգնումից կպահանջի ոչ թե վերանորոգում, այլ պահպանում: Պուրակների եւ այգիների նկատմամբ առաջին վերաբերմունքը Ռուսաստանում դրսեւորել է Ալեքսանդր Բենուան՝ կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի ժամանակների եւ նրա Ցարսկոյե Սելոյի Եկատերինայի այգու իր գեղապաշտությամբ: Նրա հետ բանաստեղծորեն բանավիճել է Ախմատովան, որի համար Ցարսկոյեում կարեւորը Պուշկինն էր, այլ ոչ թե Ելիզավետան.

Այստեղ ընկած էր նրա եռեզրը
Եվ մաշված հատորը Պարնիի:

Այո՛, դուք ինձ ճիշտ եք հասկացել. ես անցյալի հուշարձանների նկատմամբ երկրորդ վերաբերմունքի կողմնակիցն եմ: Եվ ոչ միայն նրա համար, որ երկրորդ վերաբերմունքն առավել լայն է, հանդուրժողական եւ ավելի զգուշավոր, առավել քիչ ինքնավստահ եւ ավելի շատն է թողնում բնությանը՝ ստիպելով հոգատար մարդուն հարգանքով նահանջել, այլ նաեւ այն պատճառով, որ այն մարդուց պահանջում է մեծ երեւակայություն, առավել շատ ստեղծարար գործունեություն: Արվեստի հուշարձանի ընկալումն ամբողջական է միայն այն ժամանակ, երբ այն մտովի վերստեղծում՝ ստեղծագործում է արարողի հետ, լի է պատմական զուգադրումներով:

Անցյալի նկատմամբ առաջին վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, ստեղծում է ուսումնական ձեռնարկներ, մանրակերտներ. նայեք եւ իմացեք: Անցյալի նկատմամբ երկրորդ վերաբերմունքը պահանջում է ճշմարտություն, վերլուծական կարողություններ. անհրաժեշտ է տարիքը տարանջատել առարկայից, պետք է պատկերացնել, թե այստեղ ինչպես է եղել, ինչ-որ չափով ուսումնասիրել: Այս երկրորդ վերաբերմունքն առավելապես մտավոր կարգապահություն, մեծ գիտելիքներ է պահանջում հենց դիտողից. նայեք եւ պատկերացրեք: Եվ անցյալի հուշարձանների նկատմամբ այս մտավոր վերաբերմունքը վաղ թե ուշ կրկին ու կրկին ի հայտ է գալիս: Անհնար է սպանել իրական անցյալը եւ այն փոխարինել թատերականով, նույնիսկ եթե թատերականացված վերակառուցումները ոչնչացրել են բոլոր փաստաթղթերը, սակայն տեղը մնացել է. այստեղ, այս վայրում, այս հողի վրա, այս աշխարհագրական կետում տեղի է ունեցել՝ այն եղել է, ինչ-որ հիշարժան բան է պատահել:

Թատերականությունը թափանցում է նաեւ ճարտարապետական հուշարձանների վերականգնման մեջ: Իսկականությունը կորչում է ենթադրաբար վերականգնվածների մեջ: Վերականգնողները վստահում են պատահական վկայություններին, եթե վերջիններս թույլ են տալիս վերականգնել սույն ճարտարապետական հուշարձանն այնպես, ինչպես այն կարող է հատկապես հետաքրքիր լինել: Այդպես է վերականգնվել Նովգորոդում Եվֆիմյան մատուռը. ստացվել է փոքրիկ տաճար աշտարակի վրա: Հին Նովգորոդին բոլորովին օտար ինչ-որ մի բան:

Քանի՞ հուշարձաններ են կործանել վերականգնողները ԺԹ դարում՝ դրանց մեջ նոր ժամանակի գեղագիտության տարրեր ներմուծելու արդյունքում: Վերականգնողները հետամուտ էին լինում համաչափությանը այնտեղ, որտեղ այն խորթ էր ոճի բուն ոգուն՝ ռոմանականին կամ գոթականին, նրանք ձգտում էին կենդանի գիծը փոխարինել երկրաչափորեն ճիշտ գծով՝ մաթեմատիկորեն հաշվարկված եւ այլն: Այդպես են կենդանությունից զրկվել Եւ Քյոլնի տաճարը, Եւ Փարիզի Աստվածամոր տաճարը, Եւ Սեն-Դենի աբբայությունը: Կենդանությունից զրկված, «պահածոյացված» են եղել ամբողջական քաղաքներ Գերմանիայում՝ հատկապես գերմանական անցյալի կատարելատիպացման ժամանակաշրջանում:

Այս ամենն իզուր չեմ գրում: Անցյալի նկատմամբ վերաբերմունքը ձեւավորում է սեփական ազգային պատկերը. քանզի յուրաքանչյուր մարդ անցյալի եւ ազգային բնավորության կրողն է: Մարդը հասարակության եւ նրա պատմության մի մասն է:

Սակայն որեւէ սկզբունք չի կարող չմտածված եւ ինքնաբերաբար իրականացվել: Պսկովի մարզի պուշկինյան վայրերում՝ Միխայլովսկոե, Տրիգորսկոե, Պետրովսկոե գյուղերում, մասնակի թատերականացումն անհրաժեշտ է:

Այնտեղ անհետացած տներն ու խրճիթները բնապատկերի անքակտելի տարրերն էին: Առանց Օսիպով-Վուլֆ տոհմի տան, Տրիգորսկոեում չկա Տրիգորսկյանը: Եվ այս տան վերականգնումը, ինչպես Միխայլովսկոեի եւ Պետրովսկոեի տների, չի ոչնչացնում իսկականությունը: Անհրաժեշտ եղավ կտրել միայն թփերն ու մատղաշ ծառերը, այլ ոչ թե հները: Անցյալի ու ներկայի մշակույթը նույնպես այգի եւ պուրակ է: Իզուր չէ, որ «ոսկե դարը»՝ մարդկության «ոսկե մանկությունը»՝ միջնադարյան դրախտը, միշտ նույնացվել է այգու հետ: Այգին կատարյալ մշակույթ է. մշակույթ, որում ազնվացած բնությունը կատարելապես միաձուլված է իր մեջ ապրող բարի մարդու հետ:

Պատահական չէ, որ Դոստոեւսկին երազում էր Պետերբուրգի ամենականաչավետ վայրերն այգիների վերածել. Յուսուպովյան այգին Սադովոյ փողոցում միացնել Միխայլովյան ամրոցի (որտեղ նա ուսանել էր) մոտի Միխայլովյան այգուն, ծառեր տնկել Մարսյան դաշտում եւ այն միացնել Ամառային այգուն, այգիների շերտ ձգել առեւտրի ամենաաշխույժ կենտրոնի միջով եւ այնտեղ, որտեղ ապրում էին պառավ վաշխառուն եւ Ռոդիոն Ռասկոլնիկովը, ստեղծել մի տեսակ դրախտ երկրի վրա: Դոստոեւսկու համար երկրի վրա երկու բեւեռ կար. Պետերբուրգը՝ Սեննայա հրապարակի շրջակայքում, եւ բնությունը՝ ժէ դարի ֆրանսիացի նկարիչ Կլոդ Լորրենի՝ ոսկե դարը պատկերող բնապատկերների ոգով. Լորրենին նա շատ էր սիրում պատկերվող կյանքի դրախտային կատարելության համար:

Նկատե՞լ եք արդյոք, որ Դոստոեւսկու «Ապուշը» վեպի ամենալուսավոր դեպքը՝ իշխան Միշկինի եւ Ագլայայի հանդիպումը, տեղի է ունենում Պավլովյան պուրակում առավոտյան: Այս հանդիպումը որեւէ այլ վայրում չէր էլ կարող պատահել: Հենց այս հանդիպման համար է Դոստոեւսկուն անհրաժեշտ Պավլովյան պուրակը: Այս ամբողջ տեսարանն ասես հյուսված է Պավլովյան պուրակի բարեհամբույր բնապատկերի մեջ:

Օբլոմովի կյանքի ամենաերջանիկ պահը՝ նրա սիրո բացատրությունը, նույնպես կատարվում է այգում:

Պուշկինի «Կապիտանի աղջիկը» վեպում Մաշա Միրոնովայի հոգսերի ուրախ ավարտը եւս տեղի է ունենում հենց Եկատերինյան այգու «լորրենյան» մասում: Դա միայն կարող էր տեղի ունենալ հենց այնտեղ եւ ոչ թե պալատական շինություններում:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ

Հայ Եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ԺԹ դարի երկրորդ կեսին

↩ էջ 6

«Հոգեւոր կրթութիւնք» բաժնում ընդգծվում էր, որ «....հիմն դաստիարակութեան վանական դպրոցաց պարտի լինիլ կրթութիւն բարեպաշտ, առաքինասէր եւ կրօնաւորական կենաց» («Արարատ», 1869, թիւ 5–12, էջ 6): «Կարգ կենցաղավարութեան աշակերտաց» բաժնում ամփոփվում էին աշակերտների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորեւ.

ա. «Գինի եւ օղի չըմպեն երբեք, բայց եթէ ոմանք առ տկարութեան խորհրդով բժշկի՝ առ ժամանակ մի, իսկ զծուխ ձգել արգելեալ է խստիւ ամենեցուն»:

բ. «Ի ձայն զանգակի յառնեն աշակերտք ամենեքեան յառաւօտուն եւ ի միջոցի կիսոյ ժամու ագանին զհանդերձս, լուանան զերեսս, սանտրեն զհերս. յարդարեն զանկողինս իւրեանց անդանդաղ եւ լռութեամբ»:

գ. «Գլխաւորն ի պատիժս յանցաւորաց եւ կանոնազանցից է յանդիմանութիւն վերատեսչին առանձինն կամ հրապարակաւ.... իսկ վերջին եւ սաստկագոյն պատիժ՝ արտաքսումն ի դպրոցէն առանց վկայագրոյ: Գանք եւ հարուածք խափանեալ են բոլորովին» («Արարատ», 1869, թիւ 5–12, էջ 6, 8):

Ինչպես տեսնում ենք, կանոնադրությունը մանրամասն հաստատում էր վանական դպրոցի պահանջներն ու կարգուկանոնը, որոնց համաձայն եւ պետք է կազմակերպվեր դպրոցի ուսումնական ողջ գործընթացը:

Ս. Էջմիածնի ժառանգավորաց վարժարանից բացի, որպես վանական դպրոցներ, գործում էին նաեւ Տաթեւի, Գանձասարի, Ս. Խաչ, Երնջակի Ս. Կարապետ եւ Կարմիր (գտնվում է Վայոց ձորի մարզում, այժմ՝ Նորավանք) վանքերի, Հառիճավանքի, Խոր վիրապի կրթօջախները:

Տաթեւի դպրոցը ժ–ժե դարերում հայտնի էր որպես համալսարանական հնագույն եւ նշանավոր կենտրոն, որի մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Լի էր խորաքնին փիլիսոփաներով, երաժիշտ երգիչներով: Ճոխ էր վարժարանը՝ վարդապետական կրթումով: Կային նաեւ անհամեմատելի արվեստավոր նկարիչներ եւ գրիչներ» (*Ստեփանոս Օրբելյան,* Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 208): Իսկ սյունեցիները վկայում էին, որ Տաթեւի կոչումն էր ամենքին գիտելիք եւ շնորհ բաշխելը, քանզի այնտեղ գիտություններն ու արվեստը մշակվում էին ճշմարտությամբ եւ պահպանվում «անապակ եւ անխառնուրդ»: Նախկինում «Սյունյաց վարդապետարան» անվամբ հայտնի դպրոցը ԺԹ դարասկզբին կորցնում է իր վաղեմի նշանակությունը: Սինոդի որոշմամբ 1852 թ. Տաթեւի վանքին կից հիմնադրվում է մի դպրոց՝ հոգեւորականների երեխաների համար: 1871 թ. վանական դպրոցը վերածվում է մասնավոր կրթօջախի, որտեղ սովորում էր Տաթեւ գյուղից շուրջ 22 սան: Ենթադրում ենք, որ դպրոցը փակվել է նյութական սուղ պայմանների եւ աշակերտների թվի հետզհետե նվազման հետեւանքով: 1876 թ. դպրոցն ունեցել է 35 աշակերտ եւ 1 ուսուցիչ: Դպրոցում դասավանդվել են ընթերցանություն, վայելչագրություն, քրիստոնեական վարդապետություն, թվաբանություն, երգեցողություն եւ այլն (տես *Ա. Մովսիսյան,* Ուրվագծեր հայ դպրոցի եւ մանկավարժության պատմության, Երեւան, 1958, էջ 98–99): 1885 թ. ցարական իշխանությունների որդեգրած քաղաքականության համաձայն՝ այս դպրոցը եւս փակվում է:

Շարուր-Դարալագյազի Ս. Խաչ վանքի հոգեւոր դպրոցը հիմնադրվել է 1875 թ., սակայն երկար չի գոյատեւել: Դպրոցի մասին մեր ունեցած տեղեկությունները սակավ են: Այն, ինչպես մյուս վանական դպրոցները, գիշերօթիկ էր եւ ուներ 8 աշակերտ:

Այսպիսով՝ վանական դպրոցները վանքերին կից գիշերօթիկ ուսումնական հաստատություններ էին եւ պատրաստում էին հոգեւոր սպասավորներ: Քննվող ժամանակահատվածում հոգեւոր դպրոցի նման բաժանումը վկայում է կրթական համակարգի ամուր եւ կանոնակարգված լինելու մասին:

Զաքարա սրկ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

† Տոն ծննդյան
Սուրբ Կույս Մարիամի –
սեպտեմբերի 8

† ԽԱՉՎԵՐԱՑ –
սեպտեմբերի 17

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստորագրված է տպագրության 31.08.2023 թ.
Տպաքանակը՝ 1265